



## ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ Է ԻՐ ԱՊԱԳԱՅԻ ԿԵՐՏՈՂԸ

*Վարուժան Ավետիսյան*

2013 թ. սեպտեմբերի 3-ից հետո պարզ դարձավ, որ Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնը զբաղեցնող Սերժ Սարգսյանը, առաջնորդվելով բացառապես անձնական և իր գլխավորած վարչախմբի կլանային շահերով, իր օտար տերերի թելադրանքով որդեգրել է Հայաստանը Մաքսային Միության, այնուհետև՝ Եվրասիական Տնտեսական Միության, իսկ հեռանկարում՝ վերպետական սկզբունքով ձևավորվող Եվրասիական Միության անդամ դարձնելու կուրս:

Նման տարբերակով իրավիճակի զարգացումը միանգամայն կանխատեսելի էր, քանի որ պայմանավորված էր ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով ակամա անկախությունն ստացած Հայաստանի՝ որպես պետության, որակական ու քանակական բացասական հատկանիշներով:

Իրապես ինքնիշխան պետություն կառուցելու բավարար կամք, գիտելիք, փորձ և ծրագիր ունեցող ազգային ընտրախավի բացակայության պատճառով հայ ժողովուրդը, ձևականորեն պետություն ունենալով հանդերձ, չկարողացավ ըստ Էուրոյան պետականորեն կազմակերպվել և իր շահերին համապատասխան որոշել իր ապագան: Ժողովուրդը չկարողացավ որոշել, թե ինչպիսին պետք է լինի Հայաստանի Հանրապետության տեղը և դերն աշխարհում ու տարածաշրջանում և, ըստ այդմ՝ ինչ ձև ու բովանդակություն պիտի ունենա նրա պետական կառավարման համակարգը, ինչպիսի հասարակություն պետք է կառուցի, մարդու և քաղաքացու ինչ իդեալի պետք է ձգտի:

Ուստի այս ամենը մեր ժողովրդի փոխարեն որոշեցին աշխարհաքաղաքական ուժային կենտրոնները: Նրանք Հայաստանը դարձրեցին իրենց ռազմավարական շահերի օբյեկտ ու ռեսուրս և ըստ այդմ մեզ պարտադրեցին պետական կառավարման համակարգ, ինչպես նաև արտաքին ու ներքին քաղաքականություն:

Այդպես Հայաստանը հետզհետե հայտնվեց Նորգաղութային կախյալության մեջ, ազգային ընտրախավի փոխարեն ձևավորվեց խամաճիկային ու հանցավոր, միևնույն ժամանակ՝ կամազուրկ ու ապաշնորհ վերնախավ:

Այդ վերնախավը ժողովրդին մեկուսացրել է արտաքին և ներքին քաղաքական գործընթացներից, դրանք սահմանափակել է իր շրջանակում և վերածել օտար տերերի միջամտությամբ իր խմբավորումների միջև հանուն կառավարման լծակներին տիրանալու հյուսվող պալատական խարդավանքների: Հայաստանյան վարչախմբերը ձևավորվում են որպես այդ խարդավանքների արդյունք և ըստ այդմ էլ իրականացնում են համապատասխան արտաքին ու ներքին քաղաքականություն:

Սակայն հանուն վերնախավի ներկայացուցիչների անձնական և կլանային շահերի երկիրն ու նրա շահերը հանձնելու տրամաբանությամբ պետությունը կառավարելու գործընթացը չի կարող գոնե նվազագույն մակարդակի վրա պահպանել պետության ինքնիշխանությունը:

Նշված գործընթացի ներքին տրամաբանության համաձայն՝ արտաքին ուժերի դրածո, ստրկամիտ ու հանցավոր վարչախմբերը, որոնք

անկախության ամբողջ ժամանակահատվածում հաջորդել են իրար, իրենց օտար տերերի աջակցությամբ Հայաստանի պետական կառավարման համակարգի միջոցով հայ ժողովրդի իշխանությունը քայլ առ քայլ յուրացնելուն զուգահեռաբար՝ ստիպված են եղել մաս առ մաս օտարին հանձնել պետության ինքնիշխանությունը և երկրի ռեսուրսները, որպեսզի դրա դիմաց կարողանան պահպանել կառավարման լծակները:

Նույն տրամաբանության համաձայն՝ արտաքին ուժերի ազդեցության մեծացման հետևանքով զուգահեռաբար մեծանում են նաև երկրի կառավարման գործերին նրանց միջամտության ծավալն ու աստիճանը, ինչի հետևանքով այդ արտաքին ուժերի անուղղակի կառավարումը պետք է փոխարինվի ուղղակի կառավարմամբ: Իսկ թե հիմնական մասով կոնկրետ որ արտաքին ուժի ուղղակի կառավարմանը (մեկից ավելի ուժերի կողմից ուղղակի կառավարումը գործնականում արդյունավետ և ռեալ չէ) պետք է հանձնվի երկիրը, կախված է աշխարհաքաղաքական ուժերի հարաբերակցությունից և հարաբերություններից:

Սեպտեմբերի 3-ից արդեն ակնհայտ դարձավ, որ Հայաստանը նորագոյության կախյալության վիճակից արդեն անցում է կատարում դասական գաղութացման ենթարկվելու վիճակին: Վարչախումբը արագընթաց տեմպերով կորցնում է ինքնուրույնության վերջին չափաբաժինները: Օտարի ձեռքում գտնվող պետական կառավարման համակարգն արդեն ամբողջությամբ վերածվել է Հայաստանն ու հայ ժողովրդին բացահայտ կերպով կեղեքող մեքենայի, իսկ ժողովրդի պլանավորված արտագաղթ իրականացնելու քաղաքականության մասով՝ նաև ցեղասպանության գործիքի:

Համապատասխան միջոցներ չձեռնարկելու պարագայում այս գործընթացը շարունակվելու է մինչև պետականության կորուստ ու հայրենաբնակ հայության ֆիզիկական ոչնչացում և/կամ ուժացում:

Մինևույն ժամանակ՝ արագընթաց կերպով փոփոխվող ներկայիս աշխարհում՝ աշխարհաքաղաքական ուժային կենտրոնների գերակայությունների վերանայման ու հարաբերությունների նոր ձևաչափերի ձևավորման հզոր միտումների առկայության պայմաններում, հայությունը ռեալ և իրատեսական հնարավորություն է ձեռք բերում ոչ միայն խուսափելու այս աղետալի հեռանկարից, այլև որակապես նոր ու հայանպաստ դեր և տեղ զբաղեցնելու ապագայի աշխարհում:

Սակայն այս դրական սցենարով մեր ժողովրդի ու պետականության զարգացումն ապահովելու համար նախ հարկավոր է ազգովի վերածվել կազմակերպված ուժի, ձեռք բերել հավաքական կամք և գեներացնել այն գործադրելու կարողություններ՝ ազգային-ազատագրական շարժում սկսելու և այն հաղթանակով ավարտելու համար:

Ակնհայտ է, որ պետականության քայքայման գործիքի վերածված առկա պետական կառավարման համակարգի միջոցով դա հնարավոր չէ անել, ուստի պետք է կազմակերպվել դրանից դուրս: Հատկապես արտերկրի հայության համար արդեն պետք է պարզ լինի, որ ապագային ու հանցավոր համակարգի կառավարման իրավունքը ճանաչելը, նրա հետ գործակցելը, նրա կազմակերպած միջոցառումներին մասնակցելը կամա թե ակամա նպաստում է մեր երկրի գաղութացման ու մեր պետականության կործանման գործին: Ուստի անհրաժեշտ է հրաժարվել գործող համակարգից ու մերժել կառավարող վարչախմբին:

Այսօրվա ցանցային աշխարհը և հայության ցանցային վիճակը հուշում են, որ պետք է կազմակերպվել նույն ցանցային սկզբունքով՝ ձևավորելով համահայկական ցանցային կառույց: Մինևույն ժամանակ՝ այդ ցանցի կառավարումն ապահովելու նպատակով հարկավոր է ստեղծել ժողովրդի կամքն արտահայտող այլընտրանքային կառավարման մարմիններ և մեխանիզմներ, որոնց միջոցով հետագայում՝ վարչախմբին հեռացնելուց հետո, կիրականացվի նաև երկրի կառավարումը:

Նախախորհրդարանի մշակած ծրագրի համաձայն՝ նախատեսվում է ստեղծել Արդարության ատյան (անցումային ժողովրդավարության և արդարադատության սկզբունքներով գործող դատական իշխանության այլընտրանքային մարմին), ապագա հայկական պետության Հիմնադիր խորհրդարան (անցումային ժողովրդավարության սկզբունքներով գործող օրենսդիր իշխանության այլընտրանքային մարմին, որը նաև կառավարելու է ազգային-ազատագրական շարժումը), իսկ որոշակի պահից՝ նաև անցումային կառավարություն:

Մինևույն ժամանակ՝ հարկ կլինի ձևավորել համահայկական մասնակցության և աջակցության գործունե մեխանիզմներ: Մասնավորապես՝ այդպիսի մեխանիզմ կարող է դառնալ ազգային-ազատագրական շարժումը սնուցելու նպատակով ստեղծվող այլընտրանքային Համահայկական հիմնադրամը:

**ՆՈՐ ՈՐԱԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ  
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ  
ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏ**

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ  
(ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ)

*Գարեգին Չուգասայան  
Նախախորհրդարանի համակարգող*

**ՀՈԿՏԵՄԲԵՐ 12 2013**

**ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

1. Հայեցակարգի ելակետերը համաշխարհային և տարածաշրջանային հարթություններում
2. Նպատակները և խնդիրները
3. Սկզբունքները և իրականացման հիմնական ուղիները
4. Հարաբերությունները միջազգային կազմակերպությունների, առաջատար և այլ պետությունների հետ

**1.1. Հայեցակարգի ելակետերը համաշխարհային հարթությունում**

- Համաշխարհայինացմամբ ձևավորվող իրավիճակը ձևավորում է համակարգային ճգնաժամի վտանգ պարունակող տուրբուլենտություն, որի մեջ արդեն նշմարվում է միջազգային հարաբերությունների հետվեցստֆալյան նոր կարգի ուրվագիծը:
- Աշխարհաքաղաքական գործոնների և ուժերի մեծաքանակությունն ու բազմազանությունը, դրանց միջև պայթարի բարդությունը բազմապատիկ չափերով մեծացնում են փոքր դերակատարների՝ իրավիճակի վրա ազդելու և իրենց շահերն իրացնելու հնարավորություններն ու կարողությունները: Առաջին պլան են գալիս ու որոշիչ են դառնում ոչ թե Նյութական, ռեսուրսային հզորությունը, այլ խելացի ուժը և կամքը:
- Հայության և Հայաստանի պարագայում խելացի ուժի և կամքի արդյունավետ գործադրման համար Էական նպաստավոր պայմաններ են հայության բնական ցանցային վիճակը և Հայաստանի ներքին կայունության ներուժը, ուստի կերպափոխումը ըստ ցանցային տրամաբանության և ակտիվ համագործակցությունը անդրազգային ցանցային միավորների հետ կհանգեցնի հայության ներուժի համախմբման և կբազմապատկի հայկական գործոնի հնարավորություններն ու կարողությունները:

**1.1.1. Միջազգային հարաբերությունների նոր կարգի ուրվագիծը.**

**Դերակատարներ և գործոններ**

- Դերակատարների տեսակային բազմազանության մեծացում, ոչ ավանդական դերակատարների՝ տարատեսակ անդրազգային ցանցային միավորների առաջացում, դերակատարների գործելաոճի փոփոխություն:
- Էթնիկ կամ կրոնական սկզբունքով ձևավորվող նոր պետությունների կամ պետական կազմավորումների առաջացման միտում:
- Սպառողական մարդու տեսակի տարածման հետևանքով առաջացած անհամապատասխանություն մարդկային հնարավորությունների և մոլորակի ռեսուրսային հնարավորությունների միջև:
- Մի կողմից՝ համաշխարհայնացած մշակույթի մեղիականացում և տնտեսության համար տեխնոլոգիական նորարարության աճող կարևորություն, իսկ մյուս կողմից՝ նրա ծայրահեղ անհրավասարաչափ բաշխվածություն և այդ պատճառով ավելի ու ավելի մեծացող խզվածքը կամրջելու անհրաժեշտություն:

**1.1.2 Միջազգային հարաբերությունների նոր կարգի երկու սցենար**

- Աշխարհի քաղաքակրթական միօրինակացման և համահարթեցման գործընթացի շարունակում՝ նպաստավոր միջավայր ստեղծելով մի քանի հզոր պետությունների և անդրազգային ցանցային միավորների կողմից ուրիշներին նորովի կառավարելու համար, դրանով իսկ մեծացնելով հետևապահի վիճակում հայտնված պետությունների ու ազգերի նոր որակի գաղութացման վտանգը:
- Քաղաքակրթությունների ու մշակույթների երկխոսության և նրանց միջև արդյունավետ փոխանակումների համար ներկայումս առաջացող մեծ հնարավորությունների օգտագործման շնորհիվ փոքր պետությունների ու այլ դերակատարների համար թռիչքային զարգացման նախադրյալների ստեղծում և այդ հիմքի վրա համերաշխության և համագործակցության սկզբունքներով առաջնորդվող միջազգային հարաբերությունների նոր կարգի ձևավորում:

**1.1.3 Պետությունների ապագան**

- Պետությունները մշտապես փոփոխվել են և ներկայումս էլ նրանց մի մասը արագ տեմպերով ու ծավալներով փոփոխվում են՝ հարմարվելով ցանցային դարաշրջանի հրամայականներին՝ կերպափոխվելով ըստ ցանցային տրամաբանության և ակտիվորեն համագործակցելով անդրազգային ցանցային միավորների հետ:
- Մեծ թվով այլ պետություններ, ընդհակառակը, չկարողանալով հարմարվել արդի աշխարհի փոփոխվող իրողություններին՝ իրենց գործառույթները զիջում են տարատեսակ միզազգային դերակատարներին՝ դրա հետևանքով հայտնվելով նոր որակի գաղութային կախվածության իրավիճակում:
- Նորգաղութատիրությունը կարող է հանդես գալ բազմամետրոպոլիության, մետրոպոլիա-միջանկյալ կիսագաղութ-գաղութ շարակարգի (էշելոն) և ոչ ավանդական դերակատարների տարբեր աստիճանի մասնակցության առանձին կամ համակցված ձևերով:

**1.2 Հայեցակարգի ելակետերը տարածաշրջանային հարթությունում**

- Աշխարհաքաղաքական ուժերի շահերի կարևոր մասը կուտակվել է երեք՝ Միջերկրական, Սև և Կասպից ծովերի ավազաններն ընդգրկող լայնածավալ տարածաշրջանում:
- Տարածաշրջանի անվտանգային ճարտարապետության ում միջավայրի հավանական փոփոխությունն՝ բալկանացում:
- Մեծ Մերձավոր Արևելքի երկրներում տեղի ունեցող խորքային զարգացումները կարող են հանգեցնել ոչ միայն դրանց քաղաքական վարչակարգի և/կամ կառավարման կարգի, այլև սահմանների փոփոխության, անգամ՝ նոր պետությունների և/կամ պետականակերպ կազմավորումների առաջացման, որոշ պետությունների տրոհման և/կամ վերացման:

**2.1 Նպատակները**

- Գլխավոր նպատակը  
 Հայաստանի՝ որպես ավանդական և ոչ ավանդական դերակատարների միջև կամրջող խաչմերուկի դերի նորովի վերաստանձնման, ինչպես նաև նրան արտաքին հարաբերությունների օբյեկտից ստեղծագործ սուբյեկտի վերածման ապահովում:
- Այլ նպատակ  
 Արտաքին հարաբերությունների ասպարեզում ցեղասպանության հետևանքների հաղթահարման, այդ թվում՝ հայ ժողովրդի պահանջատիրության բավարարման և նրա անօտարելի իրավունքների վերականգման ու իր Հայրենիքում նրա համախմբման ապահովում:

**2.2 Խնդիրները**

- Հայության և Հայաստանի մասնագիտացում՝ որպես կենսակերպի նոր մոդելների գեներատորի և/կամ ներմուծողի, արտահանողի և տեղայնացնողի (կանաչ տնտեսություն, կրթական նոր միջավայրեր, վերականգնողական էներգետիկա, նորամուծական և տեղեկության հասարակություն (այդ թվում՝ տեխնոլոգիական տրանսֆերի ապահովման):
- Ազգային ցանցային գործունեության գերակայությունների որոշում և դրա հիման վրա ազգային ցանցային առկա միավորների արդիականացում և նոր միավորների ստեղծում, ինչպես նաև արևելաքրիստոնեական ցանցի մեջ հայկական գործոնի դերի վերաստանձնում ու արդյունավետ կիրառում:
- Անդրազգային ցանցային միավորների գնահատում, դասակարգում և մշտադիտարկում, ինչպես նաև դրանց հետ հարաբերվելու հարացույցների մշակում և իրագործում:
- Հայաստանի պետական կառավարման համակարգի արտաքին քաղաքական բաղադրիչի ցանցայնացում և արդյունավետ կառավարում:

### 3.1 Սկզբունքները

- Հայակենտրոնություն և հայաստանակենտրոնություն:
- Ազգային շահերի գերակայություն:
- Համահայկականություն:
- Նախաձեռնողականություն և նորարարություն:
- Հավասարակշիռ բազմավեկտորություն:
- Ցանցայնություն:

### 3.2 Իրականացման հիմնական ուղիները

- Ազգային արժեհամակարգի և շահերի գերակայության հաշվառմամբ միջադաքակարգական ու միջտարածաշրջանային հարթություններում և անվտանգային միջավայրերում ավանդական (միջպետական) ու ոչ ավանդական (ցանցային) ինտեգրում:
- Ազգային ցանցային համակարգերի ձևավորում, զարգացում և գործադրում, ինչպես նաև անդրազգային ցանցային համակարգերի հետ դրանց հարաբերությունների իրականացում:

## 4. Հարաբերությունները միջազգային կազմակերպությունների, առաջատար և այլ պետությունների հետ

Միջազգային կազմակերպությունների հետ հարաբերություններում Հայաստանն իր ռազմավարությունը պետք է կառուցի ազգային նպատակների առաջնայնության ու գերակայության մեկնակետից՝ հատկապես ձեռնպահ մնալով վերպետական (բացառությամբ ՄԱԿ-ից) ու ռազմաքաղաքական միջազգային կազմակերպություններին անդամակցելուց:

# ՇԱՐԺՄԱՆ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ՝ ՈՐՊԵՏ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԵՐՏՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ ՈՒ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԻՔ

## *Վարուժան Ավետիսյան, Հասմիկ Էվոյան*

Հայաստանը օտար գաղութարարների ու նրանց շահերն սպասարկող պետական կառավարման համակարգի տիրապետությունից ազատագրելու և հայ ժողովրդի յուրացված իշխանությունը վերահաստատելու՝ նախկինում կատարված բոլոր փորձերը ձախողվել են: Սույն հոդվածում դիտարկվում են այդ ձախողումների պատճառները և ներկայացվում է ծրագրային հենքի վրա ժողովրդին ցանցային համակարգի մեջ կազմակերպելու միջոցով պետական կառավարման համակարգի հավանական դիմադրությունը հաղթահարելու և երկիրը ազատագրելու ճանապարհը:

### **I. Մինչ օրս համակարգի դեմ ժողովրդի պայքարի ձախողման պատճառները**

Մինչ օրս ապագային ու հանցավոր համակարգի և նրա միջուկը կազմող վարչախմբի դեմ պայքարը քանակական ու որակական առումներով բավարար չափով կազմակերպված չի եղել: Որպես կանոն, տվյալ պահի ընդդիմադիր ուժը ձևավորվել և ժողովրդին քիչ թե շատ կազմակերպված ու նպատակային քաղաքական պայքարի է հրավիրել միայն նախագահական ընտրությունների ժամանակ:

Ընդամին, ընդդիմությունը երբևէ միտված չի եղել երկարատև ու ծանր պայքարի, ուստի երբևէ չի ունեցել ծրագրային հենքի վրա պայքարը կազմակերպելու նախապես մշակված ռազմավարություն և մարտավարություն և չի ձևավորել դրա գործընթացի արդյունավետ կառավարման համակարգ:

Պայքարի տրամաբանությունը մշտապես սահմանափակվել է համակարգի ներսում, ենթարկեցվել է նրա կանոններին և տեղավորվել է ընտրական մեխանիզմի մեջ: Երբևէ չի դիտարկվել համակարգը փոխելու հարցը, այլ ընդամենը առաջադրվել է կառավարման լծակները գործող վարչախմբի ձեռքից վերցնելու և մեկ ուրիշ վարչախմբին հանձնելու հարցը: Լավագույն դեպքում՝ խոսք է եղել Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Ընդդիմությունը, եթե նույնիսկ ստեղծել է պայքարի գործընթացի կառավարման համակարգեր, ապա դրանցում երբևէ չի ներառել ժողովրդին: Նա, ըստ էության, ժողովրդին վերաբերվել է որպես քաղաքական պայքարի օբյեկտ-գործի-

քի, այլ ոչ՝ որպես սուբյեկտ-գործոնի: Այդ կառավարման համակարգերը ժողովրդի մասնակցությունն ապահովելու մասով հիմնականում բաղկացած են եղել միայն ժողովրդին հուզական հենքի վրա զանգվածային միջոցառումների մեջ ներգրավելու և որպես հախուռն ուժ վարչախմբի վրա ճնշում գործադրելու կազմակերպական միավորներից:

Ընդդիմությունը երբևէ հաշվի չի առել այն պարզ ու ակնհայտ ճշմարտությունը, որ Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող ամենակազմակերպված ուժը պետական կառավարման համակարգն է՝ իր վարչախմբով հանդերձ, ուստի նրան հաղթելու համար հարկավոր է ձևավորել ավելի հզոր ուժ, որպիսին կարող է լինել միայն կազմակերպված ժողովուրդը:

Ընդդիմությունը երբևէ հաշվի չի առել նաև, որ ժողովրդին անհրաժեշտ է հանել համակարգի և դրա մեխանիզմների ու կանոնների (պետական կառավարման մարմիններ, այդ թվում՝ դատարաններ, ինստիտուտներ, կազմակերպություններ, ընտրական հանձնաժողովներ, ընտրական մեխանիզմներ ու կանոններ և այլն) տիրապետության տակից և նրա կազմակերպական կառույցը ձևավորել գործող համակարգից դուրս, քանի որ համակարգը թույլ չի տա (գործնականում հնարավոր էլ չէ) իր ներսում ստեղծել մեկ ուրիշ համակարգ: Ուստի, մնալով համակարգին դեմ հանդիման և նրա տիրույթում, ժողովուրդը մնում է խոցելի վիճակում ու ենթակա է լինում համակարգի ճնշումներին և տիրապետող ազդեցությանը:

Վերը նշված երկու՝ համակարգի ներսում գործելու և ժողովրդին պայքարի մեջ կազմակերպված ձևով չներգրավելու, պատճառներով հերթական ընտրությունների գործընթացի ավարտից հետո պայքարը բնականոն կերպով մարել է, ինչին օբյեկտիվորեն հետևել է տվյալ պահի ընդդիմադիր ուժի փոշիացումն ու ժողովրդի հիասթափության ու արտագաղթի հերթական ալիքը:

Մինչդեռ կառավարման համակարգից դուրս ժողովրդի կազմակերպումը ոչ միայն բազմապատիկ անգամ մեծացնում է այդ համակարգի վրա ժողովրդի կողմից ազդելու հնարավորությունը, այլև շատ անգամներով նվազեցնում է նույն համակարգի ուժը: Այս պնդումը հիմնավոր է այն պարզ պատճառով, որ պետությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ ժողովրդի քաղաքական կազմակերպված-

քը: Եվ, եթե ժողովուրդը հրաժարվում է գործող պետական կառավարման համակարգից ու նրան այլևս չենթարկվելով, քաղաքականապես կազմակերպվում է այդ համակարգից դուրս, ապա այդ համակարգը գրկվում է իր սոցիալական հենքից ու գոյության հիմքերից: Նա գրկվում է իրեն պահող ու սնուցող աղբյուրից՝ ժողովրդից, և դատապարտվում է շուտափույթ քայքայման:

**II. Ցանցային սկզբունքով ժողովրդի կազմակերպումը և պայքարը որպես լուծում**

Ժողովրդին անհրաժեշտ է կազմակերպել այնպես, որ նրա կազմակերպական կառույցն ի վիճակի լինի ներգրավելու հնարավորինս մեծ թվով մարդկանց և կարողանա հնարավորինս արդյունավետ կերպով կիրառել այդ մարդկանց ռեսուրսը: Ուստի այդ կառույցը պետք է ունենա բազմապիսի կառուցվածք, որպեսզի կարողանա ներառել տարբեր հայացքներ ունեցող և պայքարի տարբեր մարտավարությունների հակված մարդկանց, մինևույն ժամանակ՝ այն պետք է լինի ճկուն և հեշտ ու արդյունավետ կառավարվող: Բացի այդ, նշված կառույցը պետք է լինի կենտունակ և կարողանա դիմագրավել վարչախմբի գործադրած բռնություններին ու ճնշումներին և դրանք հաղթահարել նվազագույն կորուստներով:

Փորձը ցույց է տալիս, որ ներկայիս պայմաններում այդպիսի չափանիշներին համապատասխանում են ցանցային սկզբունքով ձևավորվող ու գործող համակարգերը:

Այս ամենի հաշվառմամբ Նախախորհրդարանը որպես իր մշակած՝ «Հայաստանի Հանրապետությունում (Արցախը ներառյալ) նորգաղութային իրավիճակի հաղթահարման և նոր որակի հայկական պետության ձևավորման համահայկական շարժման» (այսուհետև՝ Շարժում) ծրագրի առաջին քայլ, նախատեսել է Շարժման կառուցվածքային կայացումը:

Շարժման կառուցվածքային կայացումը ենթադրում է դրա ցանցային համակարգի ձևավորումը և գործունեությունը, ինչի նպատակներն են.

- ա) պետական կառավարումից գործող վարչախմբի հեռացման ապահովումը,
- բ) գործող վարչախմբի հեռացումից հետո անցումային կառավարման փուլի ընթացքում ազգային անվտանգության և պետության կառավարելիության ապահովումը:

Նշված նպատակների իրագործման համար Շարժման ցանցային համակարգը պետք է լուծի հետևյալ խնդիրները.

1. Շարժման գործընթացի արդյունավետ կառավարում,

2. Շարժման ցանցային համակարգի ձևավորում և դրա մեջ ժողովրդի ներգրավում ու կազմակերպում,

3. Շարժման ցանցային համակարգի միջոցով առկա պետական կառավարման մարմիններին զուգահեռաբար գործող այլընտրանքային մարմինների ձևավորում և լեգիտիմացում,

4. Շարժման ցանցային համակարգի վերածում անհաղթահարելի ուժի և դրա նպատակային կիրառմամբ վարչախմբի հեռացման ու անցումային կառավարման փուլում ազգային անվտանգության և պետության կառավարելիության ապահովում:

**1. Շարժման գործընթացի արդյունավետ կառավարում**

Շարժման գործընթացի արդյունավետ կառավարումն ապահովելու համար անհրաժեշտ է վարվել նույն ցանցային տրամաբանությամբ: Այդպիսի կառավարման մեջ էական պետք է լինեն հետադարձ կապի գործոնը, ինքնակառավարման չափաբաժինը, որպես կանոն՝ մարտավարական հարցերում գրեթե ամբողջական ազատությունը: Ինչ վերաբերում է ռազմավարական հարցերին, ապա դրանց մասով կառավարումը պետք է իրականացվի համակարգման սկզբունքով:

Ըստ այդմ՝ պետք է ձևավորվի և գործառի Շարժման կառավարման համակարգ: Սկզբնական շրջանում այն ձևավորվում է Նախախորհրդարանի քարտուղարության միջուկի շուրջ: Քարտուղարությունը Նախախորհրդարանի որոշումներին համապատասխան իրականացնում է Նախախորհրդարանի գործունեության ապահովումը և ամբողջ Շարժման ընթացիկ կառավարումը՝ ըստ անհրաժեշտության ներգրավելով նաև Շարժման ցանցի տարածքային և այլ միավորների համակարգողներին:

Ձևավորումից հետո Շարժման համակարգումն իրականացնելու է Հիմնադիր խորհրդարանը՝ իր քարտուղարության միջոցով:

**2. Շարժման ցանցային համակարգի ձևավորում և դրա մեջ ժողովրդի ներգրավում ու կազմակերպում**

Ցանցային համակարգի կառուցվածքային հենքը Շարժման աջակիցների տարածքային խմբերի ցանցն է:

Բացի տարածքային խմբերից, ցանցը պետք է ներառի նաև մշտական ու ժամանակավոր բնույթի մասնագիտացված խմբերին և առանձին քաղաքացիական նախաձեռնություններին: Ցանցում իր ուրույն տեղը պետք է ունենա Շարժման ինտելեկտուալ ճակատը, որը կազմավորվում է նոր որակի հայկական պետության ձևավորման



և զարգացման ռազմավարական հայեցակարգի և այլ ռազմավարական փաստաթղթերի նախագծերի մշակմանը մասնակցող՝ Նախախորհրդարանի և քարտուղարության անդամներից, ինչպես նաև փորձագետներից: Ծարժման ինտելեկտուալ ճակատը դառնալու է նաև Ծարժման ռազմավարական որոշումների նախագծերի հիմնական մշակողը:

Հատուկ կարևորություն ունի ցանցային համակարգի արտերկրյա բաղադրիչը: Այն ձևավորվում է հայաստանյան ցանցից ավելի ճկուն և ազատ գործելու սկզբունքներով և, ըստ էության, միտված է լինելու Ծարժման գործընթացին բարոյական, նյութական, կազմակերպչական, մասնագիտական և տեղեկության հարուստությամբ աջակցելուն: Այդպիսի բաղադրիչի օրինակ է արտերկրում թափ առնող Հայկական վերածնունդ շարժումը:

Ծարժման ցանցային համակարգի ձևավորումը և դրա մեջ ժողովրդի ներառումն ու կազմակերպումը փուլային գործընթաց է:

Առաջին փուլում ձևավորվում են ըստ Երևան քաղաքի վարչական շրջանների և ՀՀ մարզերի (Արցախը ներառյալ) տարածքային խմբերը: Դրանք կազմավորվում են սակավաթիվ առաջամարտիկներից, որոնք այնուհետև ներգրավվում են ժողովրդի հաջորդ մասին:

Երկրորդ փուլում, երբ արդեն զգալի քանակությամբ մարդիկ են ներգրավվում, Երևանի վարչական շրջանների խմբերի հենքի վրա և աջակցությամբ ձևավորվում են տարածքային ենթախմբեր, իսկ մարզային խմբերի հենքի վրա և աջակցությամբ ըստ նախկին Հայկական ԽՍՀ և ներկայիս Արցախի վարչատարածքային բաժանման՝ յուրաքանչյուր շրջանում ստեղծվում են առանձին տարածքային խմբեր: Առանձին խմբեր են ստեղծվում նաև մարզային կենտրոններում և այլ խոշոր քաղաքներում: Մարզերի տարածքային խմբերի աշխատանքի կազմակերպման նպատակով ստեղծվում են համակարգող մարմիններ:

Երրորդ փուլում, երբ արդեն բավարար քանակությամբ մարդիկ են ներգրավվում, տարածքային խմբերն ու ենթախմբերը ձգտում են քաղաքներում բակերի ու փոքր թաղամասերի, իսկ մարզերում՝ բլուր գյուղական համայնքների մակարդակով ձևավորել փոքր ենթախմբեր կամ առնվազն ունենալ պատասխանատուներ:

Այս երեք փուլերն անցնելուց հետո՝ Ծարժման ցանցային համակարգը գործնականում ի վիճակի է լինում ներգրավելու ամբողջ ժողովրդին:

Չուզահեռաբար՝ Ծարժման ցանցային համակարգը ներառում է և/կամ ինքն է ձևավորում երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակներով ստեղծվող տարբեր խմբեր ու նախաձեռնություններ և սերտ գործակցություն է իրականացնում Ծարժման արտերկրյա բաղադրիչի հետ, ինչպես

նաև ձևավորում է Ծարժման ինտելեկտուալ ճակատը:

Ժողովրդի ներգրավումը կատարվում է քարոզչական-բացատրական գործունեության, տարբեր միջոցառումներում մարդկանց ներգրավման, անհատական ու խմբային աշխատանքի և ցանցային սկզբունքով կազմակերպության ընդլայնման այլ մեթոդներով:

### **3. Ծարժման ցանցային համակարգի միջոցով առկա պետական կառավարման մարմիններին զուգահեռաբար գործող այլընտրանքային մարմինների ձևավորում և լեգիտիմացում, ինչպես նաև դրանց գործունեության ապահովում**

Ծարժման տարածքային խմբերը և ենթախմբերը տեղերում ներկայացնելու են Ծարժումը, ապահովելու են ժողովրդի իրազեկումը, առանձին անձանց և խմբերի հետ տարվող աշխատանքը, Ծարժման միջոցառումների կազմակերպումը, աջակցելու են Հիմնադիր խորհրդարանի պատգամավորության թեկնածուներին՝ տեղերում քարոզչական և բացատրական աշխատանք կատարելու, ինչպես նաև ստորագրություններ հավաքելու հարցերում:

Հիմնադիր խորհրդարանի ընտրությունից հետո դրանց հենքի վրա ձևավորվելու են տեղական շտաբները, որոնք աշխատելու են Հիմնադիր խորհրդարանի և ՀՀ քաղաքացիների միջև պայմանագրերի կնքման գործընթացը համակարգող կենտրոնական շտաբի (այսուհետ՝ Կենտրոնական շտաբ) համակարգմամբ, որը ձևավորվելու է Հիմնադիր խորհրդարանի ընտրական հանձնաժողովի վերակազմակերպման միջոցով:

Տեղական շտաբները և դրանց անդամները Հիմնադիր խորհրդարանի և քաղաքացիների միջև անձ առ անձ պայմանագրերի կնքման հարցերում ենթարկվում են միմիայն Կենտրոնական շտաբի որոշումներին և հրահանգներին:

Հիմնադիր խորհրդարանի քարտուղարությունը աջակցում է պայմանագրերի կնքման գործընթացին և իր մասով ապահովում է կենտրոնական ու տեղական ընտրական շտաբների գործունեությունը:

Անշուշտ, Ծարժման ցանցային համակարգի տարածքային մարմիններն ամբողջությամբ չեն վերածվելու տեղական շտաբների, այլ դրա համար առանձնացնելու է համապատասխան մարդկային ու կազմակերպչական ռեսուրս, իսկ իրենք շարունակելու են իրականացնել իրենց գործառնությունները:

Ծարժման ցանցային համակարգի մյուս բաղադրիչները այդ գործընթացում մասնակցում են ըստ իրենց նախանշանակման:

**4. Շարժման ցանցային համակարգի վերածում անհաղթահարելի ազդեցության ուժի և դրա նպատակային կիրառմամբ վարչախմբի հեռացման ու անցումային կառավարման փուլում ազգային անվտանգության և պետության կառավարելիության ապահովում:**

Ինչպես արդեն նշվեց, գործող պետական կառավարման համակարգը Հայաստանում առկա ամենակազմակերպված ուժն է, ուստի նրա հավանական դիմադրությունը հաղթահարելու համար հարկավոր է ձևավորել ավելի կազմակերպված և հզոր ուժ, որը կարողանա անհաղթահարելի ճնշում գործադրել համակարգի վրա և նրան պարտադրել ժողովրդի կամքը:

Շարժման ցանցային համակարգն անհաղթահարելի ազդեցության ուժի վերածելու պայմաններն ու նախադրյալներն են.

- Համակարգի ցանցային կառուցվածքը և դրա գործունեության ցանցային սկզբունքն ու տրամաբանությունը: Նման չափանիշներով գործելու պարագայում Շարժումը կարող է լայնորեն կիրառել փոքր ուժով մեծ ուժին դիմակայելու և հաղթելու «պարտիզական» մարտավարություն, միանգամից մեկից ավելի շատ տեղերում կազմակերպել ու հաջողությամբ իրականացնել ճնշման գործողություններ, ապահովել այդ գործողությունների բազմազանությունն ու անկանխատեսելիությունը:

- Հուզականության և գիտակցականության օպտիմալ համադրումը: Ի տարբերություն առավելապես հուզական հենքի վրա ժողովրդին զանգվածային հանրահավաքների ու երթերի ձևով համախմբելու և նրա այդ հախումն ուժը կիրառելու տարբերակից, ցանցային պայթյալը հավասարապես հիմնված է ինչպես զգացմունքի, այնպես էլ գիտակցական մասնակցության վրա, ինչի շնորհիվ ենթակա չէ սադրանքի կամ վայրկյանական հուսախաբության:

- Տոկունությունը և կենսունակությունը: Ցանցային կառույցն իր կազմակերպական առանձնահատկությունների, այդ թվում՝ ներքին կայուն ու ամուր կապերի շնորհիվ, անհամեմատ ավելի տոկուն է և կենսունակ: Այն ի վիճակի է հարմարվելու փոփոխվող պայմաններին, կատարելու մարտավարական մանյովրներ, վերադասավորելու ուժերը, դիմանալու երկրատն ու մաշեցնող պայթյալի, ինչին ունակ չէ հրապարակում հուզական ալիքի վրա հախումն կերպով հավաքված ժողովուրդը: Մինևույն ժամանակ՝ հանցավոր համակարգի կողմից ճնշումների ու բռնության դիմելու դեպքում ցանցային կառուցվածք ունեցող Շարժումը հնարավոր չի լինի քայքայել ու փլուզել: Բացի այդ, ցանցային կառույցն ունի ինքն իրեն ապահովելու և վերարտադրելու

ահռելի ներուժ և ռեսուրս:

- Իր ազդեցությունն ու ճնշումը կառավարելու ունակությունը: Ցանցային կառույցը ունակ է գործադրելու մեթոդական ուժ, ըստ անհրաժեշտության բաշխելու և/կամ կենտրոնացնելու իր ռեսուրսները, մեծացնելու կամ փոքրացնելու իր ճնշումը, փոփոխելու դրանց թիրախները, ձևերն ու մեթոդները: Մասնավորապես՝ ցանցային պայթյալի դեպքում հնարավոր է կիրառել քաղաքացիական անհնազանդության հարյուրավոր ձևեր, ինչը գործնականում անհնար է զանգվածային հանրահավաքային մեթոդի պարագայում:

- Մասնակիցների և մասնակցության տարակարգվածությունը (դիվերսիֆիկացիա): Այս առանձնահատկության շնորհիվ Շարժումը կարող է ներգրավել ինչպես կյանքի գնով ամեն ինչի պատրաստ մարդկանց, այնպես էլ կամընտիր ձևով ու չափով Շարժմանը աջակցելու և օժանդակելու ցանկություն ունեցողներին: Սրա շնորհիվ նաև հնարավոր է դառնում մինչև ժողովրդի հիմնական զանգվածի կողմից կրիտիկական պահին իր ուժը ցույց տալու պահը Շարժման մեջ ներգրավել և դրա շրջանակում պահել ամենօրյա պայթյալի հակում չունեցող բազմահազար մարդկանց (փորձը ցույց է տալիս, որ ժողովրդի մեծ մասը մտնում է այս կատեգորիայի մեջ), ինչպես նաև գործող համակարգում աշխատող մեր քաղաքացիներին, որոնք միայն վերջին պահին են միանալու պայթյալին:

- Համակարգի մաշեցումը և քայքայումը ու դրա մաս կազմող առողջ ուժերի և անձանց հաշվին Շարժման ցանցային համակարգի կայացումն ու հզորացումը: Ներկայումս ժողովրդի մեծ մասը գտնվում է համակարգի ազդեցության ներքո, սակայն Շարժման ցանցային կառուցվածքի, սկզբունքի և տրամաբանության շնորհիվ նրանք ի վերջո սկզբում մտքով ու հոգով, իսկ երբ համակարգը բավարար աստիճանի թուլացած կլինի՝ նաև ֆիզիկապես մաս են կազմելու Շարժմանը:

- Անհրաժեշտ պահին բազմահազարանոց զանգվածային հանրահավաքներ, երթեր և այլ միջոցառումներ կազմակերպելու և դրանց միջոցով ժողովրդի կամքը թելադրելու հնարավորությունը: Որպես կանոն, բազմահազարանոց միջոցառումներ կազմակերպելու համար անհրաժեշտ է, որպեսզի զանգվածային ընկալման մեջ առաջանա ճակատագրական նշանակություն ունեցող քաղաքական կամ որևէ այլ պատճառով կամ գոնե առիթով գոյացած կրիտիկական լարվածության իրավիճակ: Ընդ որում՝ բոլոր ճակատագրական պահերին չէ, որ կարող է նման իրավիճակ առաջանալ: Ասվածի ապացույցը մեր երկրի ու ժողովրդի կյանքի ներկայիս իրողությունն է: Երկիրը թալանվում է, ժողովուրդը կեղեքվում ու արտագաղթեցվում, բայց զանգվածային ըմբոստություն չկա վարչախմբի քայքայիչ աշխա-

տանքի, ընդդիմության անգործունակության և մի շարք այլ պատճառներով: Մինչդեռ Ճարժման ցանցային համակարգի շնորհիվ ժողովուրդը վերածվում է միասնական գիտակցություն և կամք ունեցող սուբյեկտի, որը ոչ միայն արձագանքում է արդեն կատարված դեպքերին, այլև կանխատեսում է դրանք և ուղղորդում է դրանց զարգացումը: Նման կերպով կազմակերպված ժողովուրդը կարող է բազմաազգային բազմությամբ հավաքվել և իր կամքը թելադրել ոչ միայն որևէ պատճառի կամ առիթի դեպքում, այլև ցանկացած ժամանակ՝ ըստ իր որոշած սցենարի ու օրակարգի:

- Վարչախմբի հեռացումից հետո անցումային կառավարման փուլի կայունության ապահովումը: Անցումային կառավարման փուլում ցանցա-

յին կառույցի մեջ կազմակերպված ժողովուրդը դառնում է ամենամեծ երաշխիքը ներքին և արտաքին ասպարեզներում ազգային անվտանգության ու պետության կառավարելիության ապահովման, այդ թվում՝ օտար և/կամ տեղական հակառակորդի հակաքայլերը կանխելու ու չեզոքացնելու գործում:

Սրանք ցանցային կառույցի ոչ բոլոր առանձնահատկություններն են, որոնց շնորհիվ Ճարժումը կազմակերպված ձևով ներառելու է մեր ժողովրդի մեծ մասին և դառնալու է այնպիսի անհաղթարելի ուժ, որի դեմ ոչ մի պետական համակարգ չի կարող կանգնել: Նաև այն պատճառով, որ Ճարժումը յուրացնելու է համակարգի լավագույն ուժերը և դրանք կիրառելու է նրա դեմ:

## ՄԵՃ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ

### ՈՐՊԵՍ ԱԶԳԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

(2012 թ. դեկտեմբերի 15-ին Նախախորհրդարանի կազմակերպած՝ «Հայրենադարձությունը և ազգային անվտանգության մարտահրավերները» թեմայով հանրային լսումների բանախոսների ելույթների սեղմագրերը)

#### **Գարեգին Չուգասյան**

Ապագա հայկական պետության միգրացիոն քաղաքականության իմաստավորման նպատակով մենք պետք է հայրենադարձությունը ընկալենք հայրենակերտման համատեքստի մեջ և դիտենք որպես դրա անհրաժեշտ պայման: Ընդամին, հայրենադարձությունը պետք է ընկալվել միայն որպես դեպի Հայաստան տեղի ունեցող անընդհատ և վերջնական գործընթաց:

Այսօրվա համաշխարհայինացման պայմաններում մենք կարող ենք պատկերացնել, որ հայությունը ներառված է շատ ուժեղ Հայաստան կենտրոնով համահայկական ցանցապետության մեջ և, միևնույն ժամանակ հասկանալ, որ Հայաստանի և հայության շահերը, հիմնված լինելով ֆիզիկական Հայաստանի և ֆիզիկական հայության վրա, տարածվում են նաև Հայաստանի ֆիզիկական տարածքից դուրս:

Ես համամիտ չեմ մեր պատմության, մեր պատմական ճակատագրի հայտնի գնահատականների հետ: Մեր պատմությունը պետք է ընկալվել որպես սինոստիդալ՝ իր տատանումներով ու վերիվարումներով: Ներկայիս անկումը նույնպես մշտական չէ, հարատև անկման շարունա-

կություն չէ, այլ հերթական անկում է հերթական վերելքից առաջ: Մի հիվանդություն, որից դուրս գալով կարելի է ավելի ուժեղ լինել: Ինչպես Նիցշեի մասին Թոմաս Մանն էր ասում՝ «Ամեն մարդ չէ, որ կարող է Նիցշեի հիվանդությունով հիվանդանալ»: Առողջությունը չափվում է այն հիվանդության չափով, որը կարող էս հաղթահարել:

Եթե Հայաստանում մենք կարողանանք առաջադրել և լուծել վստահության վրա հիմնված սոցիալական կապիտալի ձևավորման խնդիրը և դրա շրջանակներում ստեղծենք համապատասխան ինտերֆեյսներ, ապա միանգամայն իրատեսական կդառնան հայրենադարձության բոլոր ձևերը՝ տնտեսական, գիտական, կրթական, տեխնոլոգիական, մշակութային և այլն: Եվ այս բազմատեսակ հայրենադարձությունը տեղի կունենա ինչպես մասնագետների ու նրանց ընտանիքների անդամների ֆիզիկական հայրենադարձության, այնպես էլ իրենց բնակության երկրներում լինելով հանդերձ՝ համահայկական ցանցապետության շրջանակներում նրանց ներգրավման ու արդյունավետ մասնակցության ձևաչափերով:

Միայն այսպիսի բարդ ինտերֆեյսի գոյություն-

նր հնարավորությունն կտա համախմբելու և արդյունավետ կերպով օգտագործելու այն ամբողջ ներուժն ու հարստությունը, որ մեր ժողովուրդն իր պատմական ճակատագրի բերմամբ այսօր ունի աշխարհում:

Նման սիմբիոզային ձևաչափով հայ ինքնության նորովի կառուցման այս սցենարի իրագործման համար անհրաժեշտ է ունենալ կառավարման շատ բազմապիսի ու արդյունավետ սուբյեկտ՝ համազգային կառավարման համակարգ: Այդ սուբյեկտը պետք է կարողանա գիտակցել պահի ճակատագրականությունը թե՛ հնարավորությունների ու թե՛ վտանգների առումով և ունակ լինի ցուցաբերելու բավարար կամք՝ դեպքերի ընթացքը դեպի ցանկալի կողմ ուղղելու և այդ կերպով Հայաստանն ու հայությունը անկման վիճակից թափաքային զարգացման ուղիով տանելու համար: Անշուշտ, այդ համակարգի գլխավոր բաղադրիչը պետք է դառնա ապագա Հայաստանի պետական կառավարման համակարգը:

### **Հրանուշ Խառատյան**

«Հայրենիք» բառի ընկալումն այսօրվա Հայաստանի բնակչության շրջանում դառնում է խնդրահարույց: Ինչո՞ւ: Ութսունութին և իննսունականների պատերազմական տարիներին, չնայած որոշ արտագաղթին, այս փոքր Հայաստանի Հանրապետությունն ընկալվում էր որպես ընդհանուր Հայաստանից մնացած մի շատ սիրված տարածք: Ճիշտ է, այստեղից մարդիկ գնում էին, բայց նրանց հեռանալու բազմաթիվ պատճառների շարքում հայրենիքի նկատմամբ սիրո պակասը չէր տեղավորվում: Գնում էին «հայրենիքը լքելու» զգացողությամբ՝ շրջափակման, «ցուրտ ու մութ» տարիների բազմաթիվ դժվարությունների, այստեղ մնացող հարազատներին օգնելու պատճառով: Գնում էին՝ իրենց սերը մեր երկրի, իրենց հայրենիքի նկատմամբ իրենց հետ տանելով: Այս երևույթը մեր փոքրիկ Հայաստանում ապրած մարդկանցից շատերի համար այնքան հայտնի է, որ լրացուցիչ բացատրության կարիք չունի:

Սակայն իննսունութ թվականին ի հայտ եկավ մի արտահայտություն, որ հիմա շատ տարածված է՝ «Էս երկիրը»: Այն արտահայտում է մի կարևոր ու խիստ ցավոտ զգացում՝ ինքնօտարում հայրենիքից. «Էս երկիրը» «իմ երկիրը չէ»: Ներկայումս «Էս երկիրը» արտահայտությունը համարյա դարձել է համատարած: «Մեր երկիրը» չկա, կա «Էս երկիրը»: Եվ սրա կողքին տարբեր մարդկանցից անընդհատ լսում ենք նաև «սրանց երկիրը», «իրանք», «սրանք» արտահայտությունները:

Հայաստանում ձևավորված հասարակական բևեռացմամբ հայրենիքը՝ «Էս երկիրը», «տրվեց»

բևեռներից մեկին, այն բևեռին, որը որոշումների միակ տերը դառնալով՝ դարձավ նաև Հայաստան երկրի տերը՝ այն փաստացի խլելով երկրի բնակչության քանակական մեծամասնությունից: Խլեց նյութական ռեսուրսներով, խլեց մշակութային անցյալի միահեծան մսխումով, խլեց՝ բռնության վարքի տարածումով, խլեց՝ հազարամյակներով իր հայրենիքում ապրած երկրի բնակչության քանակական մեծամասնությանը նույն հայրենիքում գրկելով արժանապատիվ ապրելու, արարելու, իր բնակարանում ապրելու և իր ունեցվածքը տնօրինելու իրավունքից և հնարավորությունից: Չարմանալիորեն կարճ ժամանակահատվածում «հայրենիքը» իր ունեցած-չունեցածով հայտնվեց այդ բևեռի ձեռքին, մյուս բևեռին թողնվեց միայն Հայրենիքը արտաքին թշնամուց պաշտպանելու պարտականությունը: Աստիճանաբար ուշքի եկած մարդիկ տեսան, որ իրենց Հայրենիքը պաշտպանում են այդ «մի խումբ մարդկանց»՝ իրենց վրա իշխանությունը շարունակելու իրավունքի համար: Հայաստանի բնակչության մոտ կեսը կազմող աղքատ բնակչությանը «սոցիալական նպաստով» գոյատևելու շնորհիվ՝ Հայրենիքը յուրացրած տերերը նրանց մեծահոգաբար իրավունք տվեցին իրենց զավակներին բնակ ուղարկելով՝ պահպանել տերերի կողմից յուրացրած Հայրենիքը, նույնիսկ չերաշխավորելով այդ զավակների առողջությունը, կյանքը... Բնակից հիվանդացած վերադարձողները մտնում են աղքատ ծնողների խնամքի աղքատ հնարավորությունների հույսին, իսկ սպանվածների դիակները նրանց հարազատներին են վերադարձվում ընդամենը հայրենիքում թաղելու թույլտվությամբ: Շրջափակված հայրենիքում գործող կենսաբանական բնագործ սկսեց գերազանցել սոցիալական մտքի հարյուրամյակների փորձին: Իրավագուրկների համար իրավատերերը սկսեցին ընկալվել որպես «սրանք», իսկ «այս երկիրն» ու «սրանք» ընկալումները տարիների ընթացքում սկսեցին նույնականանալ: 2003-2004 թթ. արդեն շատ հստակ ձևակերպումներ առաջ եկան. «Էս երկիրը» «սրանց երկիրն է», «Էս երկիրը իրանց երկիրն է», «մենք ի՞նչ կապ ունենք այս երկրի հետ», «Էս երկրում մենք օտար մարդիկ ենք», «Էս երկրից գնալը կփրկի»...: Այս կերպող առաջացնելով ճգնաժամ հայրենիքի հանդեպ սիրո մեջ: Հայրենիքի հանդեպ սերը կարող է սնուցվել հայրենիքի բնակչության ընդհանուր իրավունքի և ընդհանուր զգացմունքների դեպքում: Ինչպես իրավունքը կիսվեց, այնպես էլ՝ հայրենիքի ընկալումը, զգացմունքը: Հայրենիքի նկատմամբ մարդու և քաղաքացու սերը տևական ժամանակ որևէ կերպ փոխհատուցում չստացավ, այդ թվում՝ աշխատելու, վաստակելու, հայրենիքի տերը և միաժամանակ պաշտպանը լինելու առումներով: Ընդհակառակը՝ ամեն քայլափոխի նրանք մերժ-

վել են, զրկվել են հայրենիքում տեղ ունենալու և արժանապատիվ ապրելու հնարավորությունից: Նման զարգացումը հանգեցրել է հայրենիքի հետ հոգեկան կապի խզման: «Չայրենասեր» բառը սկսեց ընկալվա՞ն կարիք ունենալ. ի՞նչ է նշանակում այն, ո՞րն է այդ հայրենիքը, որ պետք է սիրենք, ինչու՞ պետք է սիրենք հայրենիքը, ինչպե՞ս պետք է սիրենք հայրենիքը և, առհասարակ, ո՞րն է սկզբունքորեն հայրենիքի հետ կապը:

Չայրենիքը և՛ ֆիզիկա-աշխարհագրական, և՛ սոցիալ-մշակութային մի տարածք է, որտեղ մարդը պետք է սիրով ուզենա ապրել: Մարդը հեռանում է հայրենիքից, որովհետև իրեն այնտեղ չեն սիրում և ինքը դադարում է սիրել այդ տեղը, դադարում է սիրել այդ աշխարհագրական և սոցիալական ու մշակութային տարածքը, որտեղ ինքը ոչ միայն, կամ նույնիսկ՝ ոչ թե նյութական բարեկեցությունից է զրկված, այլ մերժված է, մերժված է որպես կայանալու շանս ունեցող, հեռանկար ունեցող, արժանապատվություն ունեցող և ընդհանրապես կյանքին մասնակցող անհատ: Մեր հասարակության զգալի մասը մերժված է մեր հայրենիքում, մեր հանրապետության ներկայիս տարածքում հեռանկար ստեղծելուն մասնակցելուց, իրեն մարդ զգալու հնարավորությունից: Ուրեմն ի՞նչը պաշտպանել, իր նվաստացած գոյությունը, «մի խումբ մարդկանց»՝ իրեն կեղծելու իրավունքը, իր տունը, իր հայրենիքը բնական ռեսուրսներից զրկելով՝ իր գոյությունը շարունակելու անհնարիությունը, իր տգեղ աղքատությունը, իր անուրախ գոյությունը, իր իրավազրկությունը:

Չայրենիքը նույնանում է մի տեղի հետ, որտեղ մարդը խոնարհվում է ու նվաստանում: Իսկ մարդիկ հոգնել են խոնարհվելուց ու նվաստանալուց: Ուստի մարդիկ սկսում են չսիրել հայրենիքը: Այս համատեքստում, օրինակ, շատ հստակ հասկանալի է դառնում, թե ինչու ընտրությունների ժամանակ հինգ, տասը, քսան կամ հիսուն հազար դրամով մարդը շատ հեշտ կարող է ծախել իր խիղճն ու համոզմունքը. «Էս երկրում» նրա «խիղճն ու համոզմունքը» այնքան է նվաստացել, «պատիվ» հասկացությունն այնքան է ստորադասվել «հենց հիմա և հենց այստեղ, այս փակ տարածքում» ուժի կիրառմամբ թալանելու երևույթին, որ «ծախված խիղճը» պարզ առևտրական գործարք է դարձել: Առավել ևս, որ մարդն ընտրությունները չի տեսնում կյանքի ու հայրենիքի հետ հետագա կապի մեջ: Չայրենիքը իրենը չէ, հայրենիքը «իրանցն է, իրանք ինչ ուզում են, անում են»:

Սա արդեն գաղութային երկրի իրավիճակ է և բոլորին հայտնի է, թե ովքեր են գաղութարարները՝ անձերով և շերտով: Տվյալ պարագայում նկատի չունենմ արտաքին ուժերից կախվածությունը, մակարդակները, հեռանկարները: Ես խո-

սում եմ մեր երկրի ներքին հասարակական տրամաբանության մասին, որտեղ գաղութարարները հայրենիքն ընկալում են որպես այն կեղծելու մենաշնորհացված դաշտ: Նրանք հայրենիքի այդ խեղձված ընկալման տեսակետից զուգահեռաբար ըստ էության յուրացրել են նաև հայրենիքի նկատմամբ սիրո ձևը, հնարավորությունն ու իրավունքը՝ դրանով իսկ նեղացնելով ու աղավաղելով այդ երևույթները, ինչի պատճառով էլ հասարակական գիտակցության մեջ հայրենիքը ընկալվում է որպես գաղութ, որտեղ մարդուն կեղծելու են, մերժում ու ստորացնում: Մինչդեռ հպատակները բացարձակապես զուրկ են հայրենիքից պաշտպանվածության, հայրենիքում ռեալիզացվելու, հայրենիքում հեռանկար ունենալու հնարավորություններից: Չայրենիքը չի պաշտպանում «անտերներին», «գոհերին»: Եվ քանի դեռ մարդիկ չեն տեսնում գաղութարարին և գաղութատիրությունը հաղթահարելու ճանապարհը, փախչում են գաղութից: «Սրանց հայրենիքում» մարդիկ հեռանկար չեն տեսնում ոչ միայն իրենց, այլև իրենց սերունդների համար:

Ահա սա է հայրենիքի ընկալման ճգնաժամը: Չայրենիքը դադարել է հայրենիք լինելուց: Նման իրավիճակում հայրենիքի ընկալումը կամ հայրենասիրությունը մարդու համար դառնում է բեռ: Չայրենասիրությունը դառնում է վիրտուալ սեր մի բանի նկատմամբ, որի հետ առարկայական կապը չի զգում:

Չայաստանի բնակչության շրջանում առկա՝ հայրենիքի զգացողության ճգնաժամն աստիճանաբար տարածվում է նաև Սփյուռքում:

Քանի դեռ մարդը տեր չէ հայրենիքին, չի զգալու հայրենիքի հետ կապը, չի սիրելու հայրենիքը, չի ապրելու այնտեղ և չի ծառայելու նրան:

Ուստի անհրաժեշտ է հայրենադարձության ծրագրեր մշակելուց և դրանց իրականացմանը ձեռնամուխ լինելուց առաջ այսօրվա Չայաստանում՝ Չայաստանի Չանրապետության քաղաքացիների շրջանում, ինչպես նաև արտերկրաբնակ հայության մեջ գոյացնել հայրենիքի լիարժեք տիրոջ զգացում՝ այդ հայրենիքում փոխադարձաբար սիրո և հարգանքի արժանանալու հնարավորության ձևավորմամբ:

### **Սարգիս Ճահինյան**

Ուզում եմ այս հարցը դիտարկել հեռանկարի տեսակետից: Կարծում եմ, որ Չայաստանի անկախության քսան տարվա ընթացքում իշխանությունները չկարողացան ստեղծել այն մտապատկերը, որը կարողանար համոզիչ դառնալ Չայաստանի բնակչության համար՝ նրան մղելով այս հողի վրա նպատակներ ունենալու, մնալու, բարգավաճելու, երջանիկ լինելու, ստեղծագործելու:

Կարծում եմ, որ չստեղծվեց ղեկավարների կողմից այդ գաղափարախոսականը, որը պետք է հնարավորություն տար ժողովրդին՝ ինքն իրեն նույնացնելու այս ղեկավարության հետ, նաև նրա հանդեպ վստահություն ունենալու: Ընդհակառակը՝ այդ ամբողջ կապիտալը, որը այս կառավարությունը, այս իշխանությունը, նախկին իշխանությունները ունեին, քանդվեցին կաշառակերությամբ, ոչ պիտանի քաղաքականություն վարելու հետևանքով և, ամենակարևորը՝ նրանք չկարողացան պահպանել ու արժևորել այն մշակութային և հոգևոր ավանդությունները, արժեքները, որոնք իրականության մեջ հայ ժողովրդին բնորոշ են:

Կարևորագույն դժվարություններից մեկը (դեռ չխոսենք հայրենադարձության մասին, այլ խոսենք բուն պատճառների մասին, որոնք մարդկանց մղեցին հսկայական քանակությամբ լքելու Չայաստանը, գնալու արտասահման, անկեղծ ասած՝ ոչ վերադառնալու նպատակով) հույսի կորուստն է: Մարդիկ կորցրել են իրենց հույսը ոչ միայն իշխանություններից, այլև իրենց շրջապատից: Ահա հոգևոր և մշակութային միջավայրի պակասության արդյունքը, որը մեզ պետք է դրդի ինքնաքննադատության:

Սփյուռքի հայերը, ինչպես նաև հայաստանաբնակ ժողովուրդը, պետք է այնպիսի մթնոլորտ ստեղծեն, որ Չայաստանում ապրելը և բարգավաճելը ոչ միայն դառնա հաճելի, այլև անհրաժեշտ: Առանց սրա չենք կարող խոսել հայրենադարձության մասին: Պետք է խորը մտածել, թե ինչպես ևս մեկ անգամ համոզիչ ձևով ստեղծել պայմաններ, որպեսզի առաջին հերթին մարդիկ չթողնեն ու չհեռանան:

Ինչո՞ւ մենք զարգացում չունեցանք բոլոր ոլորտներում առանց բացառության: Ուզում եմ վերադառնալ Իսրայել պետության հիմնադրման օրինակին և հիշեցնել, թե այդ պետության հիմնադրման գործում ամենակարևոր դերակատարում ունեցած անձինք ի՞նչ մոտեցում ունեցան հենց սկզբից, որպեսզի կարողանան ստեղծել հենց իմ նշած մտապատկերը: Իրենք անջատվեցին վեց ամսով դեպի անապատ, գլուխ գլխի տալով փորձեցին ստեղծել այն օրենքները, որոնք վրա պետք է հիմնվեր Իսրայելի պետությունը: Երբ արդեն պարզ էին այդ սկզբունքները և ուղղությունները, նրանք արեցին ամեն ինչ, որպեսզի այդ երևակայությունը կարողանան իրականացնել: Նրանք այդ ամենը սրկեցին ամբողջ ժողովրդին, բոլոր մարդկանց: Առաջին իսկ պահից մեծ դեր խաղաց կրոնը, իսկ ամենակարևորը՝ դպրոցը՝ մանկապարտեզից սկսած: Այդ գիտակցությունը ստեղծվեց ամեն անձի մեջ՝ այդ թե կին, որ իրենք իրավունք ունեն այդ երկրի վրա մնալու, աճելու, բարգավաճելու:

Իսկ ո՞րն է պատգամը այսօրվա իշխանութ-

յունների: Ես չեմ խոսում այն պատգամի մասին, որը հնչեցվում է, այլ թե Սփյուռքի հայերը և Չայաստանի հայերը որքանով են հավատում դրան:

Այս վիճակը ոչ մի կայունության մասին չի խոսում և ոչ մի վստահություն չի ներշնչում: Ի՞նչ անել, որ սա փոխվի: Մենք վկա ենք, որ հիվանդ ժողովուրդ ենք, սակայն փորձում ենք մեր բոլոր պակասությունները հենց նույն ոճի ներքին միջոցով բուժել, որոնց մենք զոհ գնացինք՝ բռնատիրություն, ստրկատիրություն և այլն:

Չայրենադարձությունը չի կարող դեղ լինել այս հիվանդության համար: Կարող է միայն շատ ժամանակավոր բուժել սիմպտոմները: Կարող եմ նույնիսկ ասել՝ այնքան ժամանակով, որից հետո հայրենադարձած ժողովուրդը ընդմիշտ կթողնի Չայաստանը՝ չուզելով անգամ տեսնել այս հայերեն խոսող անձանց երեսը:

Մենք պետք է համեստություն և ազնվություն ունենանք ինքներս մեր վրա աշխատելու, որպեսզի կարողանանք վիճակը ներսից փոխել: Սփյուռքը չի կարողանա փոխել դրսից, միայն կարող է թիկունք կանգնել պայքարողներին: Բուն փոփոխությունը, բուն քաղաքացիական ապստամբությունը, մտավորական ապստամբությունը բնիկ ժողովուրդը, այսինքն՝ Չայաստանում ներկայումս ապրող ժողովուրդը կարող է անել:

### **Վարդան Մարաշյան**

Ես ներկայացնում եմ «Վերադարձ Չայաստան» կազմակերպությունը: Մեր կազմակերպության անցկացրած՝ Սփյուռքի և Չայաստանի համար հայրենադարձության կարևորության վերաբերյալ հարցումների արդյունքների համաձայն, հայրենադարձությունը.

1. մինիմալիզացնում է ձուլման ռիսկերը,
2. երաշխավորում է մեր և մեր երեխաների հայ լինելու ապագան,
3. շատ կարևոր այլընտրանք է հայերի համար, որոնք ապրում են անկայուն ռեզիդենտներում. այն ինչ է տեղի ունենում Սիրիայում, կարող է տարածվել նաև այլ երկրների վրա,
4. կարևոր է այն հայերի համար, որոնք ուզում են իրենց անձնական լուրման ունենալ մեր պետության կայացման գործում,
5. որոշ հայրենադարձների համար Չայաստանում կյանքի որոշակի որակ ունենալու հնարավորություն է, ինչը բավական դժվար է ձեռք բերել իրենց երկրներում,
6. հազեցած շուկաներ ունեցող երկրներում բնակվող և աշխատող հայրենադարձներին հնարավորություն է տալիս իրենց գիտելիքները և փորձը իրացնել Չայաստանում՝ տնտեսության նոր սեգմենտներում և նոր տնտեսական ոլորտներում:

Պետության համար նույնպես այս ամենը պետք է կարևոր լինի, որովհետև մշակութային երկիր բերելով այդ մարդկանց, պետությունը միայն կշահի: Սա, բնականաբար, կնպաստի երկրում որակական փոփոխությունների կատարմանը և տնտեսական նոր հնարավորություններ կստեղծի, այդ թվում՝ կօգնի գրավելու Չայաստանից դուրս գտնվող այլ շուկաներ:

Մենք ունենք ազգային անվտանգության լուրջ խնդիրներ, որոնք առաջանում են արտագաղթի պատճառով: Դրանք հնարավոր է լուծել Արցախի, հատկապես՝ նրա ազատագրված տարածքների վերաբնակեցման և հայրենադարձության միջոցով: Այս այդ գործընթացում հայրենադարձները կարող են շատ լուրջ ներդրում ունենալ:

Պետությունը հստակ պետք է հասկանա, որ կարևոր է ձևավորել նոր տնտեսական գոտիներ և նոր պայմաններ ու ռեժիմներ, որպեսզի հայերը կարողանան հաստատվել սահմանամերձ տարածքներում և Արցախի ազատագրված տարածքներում: Այդ պատճառով պիտի հստակ ձևավորվեն նոր մոդելներ, բիզնես մոդելներ, որոնցում կմասնակցեն և՛ պետությունը, և՛ սփյուռքյան կազմակերպությունները՝ նոր բնակավայրեր ձևավորելու նպատակով: Շատ կարևոր է սկսել այն շարժումը, որը կապում է կոնկրետ սփյուռքյան համայնքը կոնկրետ համայնքի կամ գյուղի հետ: Այս մեխանիզմով յուրքանչյուր դեպքում հնարավոր կլինի զարգացնել որևէ կոնկրետ տարածաշրջան կամ կոնկրետ գյուղ:

Կարևոր է, որ պետությունը և սփյուռքյան կազմակերպությունները ստեղծեն կարճաժամկետ ինտեգրման դասընթացներ, որպեսզի հայրենադարձները կարողանան ճիշտ և արդյունավետ կերպով ինտեգրվել:

Պետությունը պետք է նաև ձևավորի ժամանակավոր կացության ֆոնդ և առաջարկի վարձակալության սուբսիդիաներ, ինչպես, օրինակ, անում է Իսրայելի պետությունը, ինչպես նաև հատուկ շինարարության ծրագրեր մշակի ազատագրված տարածքներում, որպեսզի մարդիկ ավելի պատրաստ լինեն տեղափոխվելու այնտեղ: Առհասարակ պետության աջակցությունը ավելի լուրջ ու պրոֆեսիոնալ պետք է լինի՝ աշխատանք գտնելու, գործ սկսելու և իրավական աջակցություն ստանալու հարցերում:

Չայրենադարձության հարցում հիմնական անելիքներն են.

1. Մենք պետք է արտագաղթի և ձուլման պրոբլեմը Սփյուռքում դարձնենք որպես հայրենական անվտանգության համար մեկ պրոբլեմ և հասկանանք, որ այն իրականում կարող է առաջիկա տասը-քսան տարիների ընթացքում աղետի վերածվել, եթե որևէ բան չփոխենք:

2. Կարևոր է հասկանալ, որ որակյալ հայրենադարձությունը, այսինքն՝ գիտելիք և կարողութ-

յուններ ունեցող և դրանք տեղացի ժողովրդին փոխանցելու և նրանց հետ կյանքի դժվարությունները կիսելու հարցում պատրաստակամ մարդկանց հայրենադարձությունը, կարող է շատ լրջորեն օգնել նշված պրոբլեմի լուծմանը:

3. Շատ կարևոր է, որ պետությունը և սփյուռքյան կազմակերպությունները հայրենադարձությունը համարեն որպես համար մեկ խնդիր և համապատասխան ծրագրեր մշակեն ու գումարներ հատկացնեն տարբեր ձևերով հայրենադարձությունը խթանելու համար:

4. Դարձյալ շատ կարևոր է, որ պետական մակարդակով մշակվի հատուկ ծրագիր, թե ինչպես պետք է պետությունը և սփյուռքյան կազմակերպությունները վարվեն այն պարագայում, երբ հայերը վտանգված են:

5. Պետք է նաև հստակ ծրագիր ունենանք և հասկանանք՝ ինչպես ենք վերաբնակեցնում ազատագրված և սահմանամերձ տարածքները:

6. Ամենակարևորը՝ մենք պետք է քսան-երեսուն տարվա կտրվածքով նայենք այս հարցերին և փորձենք հասկանալ, թե ինչ պետք է անենք, ինչպիսի քաղաքական և տնտեսական մոդելներ պետք է ընտրենք:

Այս ամենը ենթադրում է բավականին լուրջ փոփոխությունների իրագործում, ուստի պետք է համագործակցել բոլոր առողջ ուժերի հետ: Սփյուռքը նույնպես պետք է ավելի հստակ հասկանա այսօրվա ռեալ խնդիրները և շեշտը դնի դրանց վրա: Քանի, որ ինչպես ասացի, խոսքը վերաբերում է այն հարցին՝ քսան-երեսուն տարվա հեռանկարում ունենալու ենք պետություն թե ոչ: Եվ, համապատասխանաբար, պետք է նկատի ունենալ, որ եթե պետություն չլինի, Սփյուռքի մասին կարելի է մոռանալ, որովհետև առանց հզոր պետության Սփյուռքը կձուլվի շատ արագ տեմպերով:

### **Ռոբերտ Այդաբիրյան**

Վերջին 20 տարվա ընթացքում համաշխարհային մասշտաբով տեղի ունեցող քաղաքական, սոցիալական և տնտեսական տազնապները բազմապատկեցին գաղթականության աճը երկրագնդի վրա: 215.000.000 մարդ այս գաղթականության վերջին ալիքն է, ինչը բացառիկ մեծ թիվ է:

Չեթխորհրդային երկրներում արտագաղթի ալիքը չափազանց վտանգավոր չափերի է հասնում: Այդ երկրների, այդ թվում՝ Չայաստանի վերաբերյալ կան գիտնականների և համաշխարհային աշխատանքի գրասենյակների կատարած լուրջ ուսումնասիրություններ և վերլուծություններ ներգաղթը խթանելու և Սփյուռքը ուժեղացնելու վերաբերյալ:

Միևնույն ժամանակ՝ մի շարք երկրներում,

**Կարեն Աղեկյան**

ինչպես, օրինակ՝ Չինաստանում, Յնդկաստանում և Հարավային Աֆրիկայում, կա զգալի ներգաղթ: Օրինակ՝ վերջին տարիների ընթացքում Չինաստան վերադարձան մոտ 500.000 չինացի, որոնք ուսում են ստացել և աշխատել Արևմուտքում: Այս 500.000-ից շատերը աշխատել են բարձր տեխնոլոգիաներով, մասնագետներ են և Չինաստանում տիրապետում են այդ դաշտին: Նույն երևույթն է նաև Յնդկաստանում, որտեղ հանրաժանութ, համաշխարհային Կատայի ընկերության տնօրենը խոստովանում էր, որ իր աշխատավորները և ղեկավարները մինչև մայր հայրենիք վերադառնալը կրթվել և աշխատել են արտասահմանում: Անշուշտ, նրանց թվում կան ոչ միայն բարձր տեխնոլոգիաների մասնագետներ, այլև շատ այլ մասնագետներ, որոնք օգտակար կլինեն իրենց երկրին:

Վերջերս առիթ ունեցա հանդիպելու վաթսուներկու տարեկան հայ տղաների և աղջիկների, որոնք հավաքվել էին աշխատելու նպատակով դիմելու Հայ երիտասարդ մասնագետների միության: Այդ վաթսուներից երեսուները Հայաստանից էին, որոնց մեջ կային շատ փայլուն աղջիկներ: Շատերը պատրաստակամ էին վերադառնալու հայրենիք: Իրենց լեզուների իմացությամբ՝ հայերեն, ֆրանսերեն և այլ լեզուներ, իրենց կեցվածքով, արտաքին աշխարհի հասկացողությամբ, նրանք չափազանց օգտակար կարող են լինել իրենց հայրենիքին, եթե վերադառնան: Մանավանդ, եթե օգտագործեն միջպետական համագործակցության ծրագրերը:

Այսպիսի ծրագրերը կարող են իրականանալ, եթե ապահովվեն հետևյալ պայմանները.

- 1. լավ ծրագրեր,
- 2. անհրաժեշտ աշխատուժ,
- 3. անհրաժեշտ ֆինանսներ:

Հատկապես պետք է նկատի ունենալ, որ առանց որակյալ աշխատուժի հնարավոր չէ գտնել ֆինանսներ: Շատ դժվար է ֆինանսավորել ծրագրեր, որոնց մեջ համապատասխան հարմար և խելացի մասնագետներ չկան:

Միևնույն ժամանակ՝ տաղանդի և ֆինանսների վերադարձը դեպի նոր զարգացող երկրներ, ինչպիսին է Հայաստանը, հնարավոր է միայն վստահության հարցը լուծելու պարագայում, որը քաղաքական և բարոյական կախում ունի: Թող մեր այսօրվա ղեկավարությունը և նաև վաղվա ղեկավարությունը լավ մտածեն այս հարցի շուրջ:

Վստահությունն անհապաղ պետք է: Այդ վստահության մթնոլորտը պետք է ստեղծվի թե՛ Հայաստանի ներսում, թե՛ Հայաստանից դուրս, որպեսզի ներգաղթող լավագույն մասնագետները կարողանան իսկապես օգտակար աշխատել ի շահ մեր հայրենիքի զարգացման և ապահովության:

Իմ կարծիքով, դեռևս չի ավարտվել հայրենիքի՝ որպես արդիական ազգի, ճակատումը և նրա մեջ չի ամրապնդվել ընդհանուր ճակատագրի տեսլականը: Կան առանձին հատվածներ, որոնք ավելի ռուսահայության, տաճկահայության կամ պարսկահայության ժառանգորդներ են:

Հայաստանում անհրաժեշտ է ակտիվ քարոզչություն տանել Սփյուռքի հետ մեկ ամբողջություն լինելու մասին՝ անկախ մշակութային, հասարակական, հոգեբանական և բոլոր այլ տարբերություններից: Նույն կերպ՝ պետք է Սփյուռքում քարոզչություն տարվի այն ամենի երկրորդայնության մասին, ինչը կապված է Հայաստանի հետ:

Հայությունը Հայաստանի միակ ռեսուրսն է: Սփյուռքահայը պետք է հասկանա, որ նա իր ինքնությունը պահում է ոչ թե ի օգուտ Հայաստանի, այլ՝ ի հաշիվ Հայաստանի: Հայաստանի համար կարևոր չէ՝ ես «Հայր մերը» լավ, թե վատ գիտեմ, լավ, թե վատ եմ պարում ավանդական պարերը: Հայաստանի համար կարևոր են իմ էներգիան, իմ կարողությունները, իմ անելիքը: Դրանք պետք է հնարավորինս շուտ մեկտեղվեն մի շարժման մեջ, որը պետք է ենթադրի Հայաստանի հասարակական և քաղաքացիական ուժերի մասնակցությունը Սփյուռքի կազմակերպությունների վերբեռնումը և նրանց գործունեության սկզբունքների փոփոխումը: Միևնույն ժամանակ՝ սփյուռքահայերը պետք է ՀՀ-ում և ԼՂՀ-ում հասարակական ու քաղաքացիական կյանքին ակտիվ մասնակցելու և անհրաժեշտ բարեփոխումներին աջակցելու հնարավորություն ունենան:

Այդպիսի փոխադարձ ակտիվությունը կօգնի հաղթահարելու օտարացումը: Այսօր հայերի խնդիրն է Հայաստանում և Սփյուռքում հասարակական-քաղաքական կյանքը բավարար չափով կազմակերպված պահելը: Քանի դեռ մեր ընդհանուր կյանքերով չի փոխվել համակարգ՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում, որևէ մի հարցում, այդ թվում՝ հայրենադարձության, անհնար է արդյունք ակնկալել:

Չենց Հայաստանում գոյություն ունի մի խնդիր, որ համարժեք է Սփյուռքից հայրենադարձության: Դա ազատագրված տարածքների վերաբնակեցման խնդիրն է: Հայաստանում վերաբնակեցման շարժման բացակայությունը և Հայաստանից շարունակվող արտագաղթը բացասաբար են անդրադառնում հայրենադարձության վրա:

Հայրենադարձության մասին խոսելով, առաջին հերթին պետք է հաշվի առնել մարդկանց շահերը: Դժվար է լուրջ արդյունքներ ակնկալել, եթե անտեսվում են առանձին անհատի շահերը: Անհատական շահերը կարող են վնաս հասցնել ազգային գործին, բայց առանց անհատական



շահերի գործն առաջ չի շարժվի: Անհրաժեշտ է ներարկել հավատ, որ հայն իր օգուտը քաղի ոչ թե հայ ազգի և հասարակության հաշվին, այլ նրանց շնորհիվ:

Պետք է աջակցության ծրագրեր լինի ինչպես Սփյուռքից Հայաստան ներգաղթողների, այնպես էլ ավելի մեծ չափով՝ ազատագրված տարածքներում բնակվողների համար: Հասարակության մեջ պետք է քարոզվի այդ ծրագրերի արդարացվածությունը: Անվտանգության հետ դրանց կապն ակնհայտ է:

Հայրենադարձություն-արտագաղթ հարաբերակցությունը՝ արտագաղթի գերակշռությամբ,

նշանակում է, որ Հայաստանը դեռ ազգային պետություն չէ և հանրային պետություն չէ: Այդպիսի երկիրը միշտ վտանգի մեջ է: Պետք է ազգայնացնել և հանրայնացնել պետությունը: Հայաստանում և Սփյուռքում ազգային անվտանգության և հայրենադարձության փոխկապված խնդիրների լուծման համար կարևորը ոչ թե իշխանության մեջ անձնակազմի փոփոխությունն է, այլ իշխանության և կառավարման ամբողջ համակարգի փոփոխությանը միտված քաղաքացիական միասնական նախաձեռնությունների զարգացումը:

---

## ԻՆՉՆ Ե ԲԱՑԱՐՁԱԿ ԱՐԺԵՔ

*Ալեք Ենիգոմյան*

Հատված 2013 թ. հոկտեմբերի 26-ին [www.asekose.am](http://www.asekose.am) համացանցային լրատվամիջոցի հեռուստատեսային բաժնի «Բացարձակ արժեք» հաղորդաշարին տված հարցազրույցից

Բացարձակ արժեքը, իմ համոզմամբ, ազատ և ստեղծագործ մարդն է: Միևնույն ժամանակ՝ վերացական մարդ գոյություն չունի: Մարդը ծնվում է ինչ-որ մշակույթում, ինչ-որ էթնիկական, ազգային իրականության մեջ: Ի ծնե մարդը ինչպես հասարակական, այնպես էլ էթնիկական-մշակութային էակ է: Հետևաբար, բացարձակ արժեքն ինձ համար, այսինքն՝ հայ մարդու համար և մեր ժողովրդի համար, ազատ և ստեղծագործ հայ մարդն է, ազատ ու ստեղծագործ հայ ազգը:

Սա չի հակադրվում այլ ժողովուրդներին: Յուրաքանչյուրն իր բնօրրանում պետք է լինի ազատ և ստեղծագործ:

Ես շատ եմ կարևորում «ազատ» և «ստեղծագործ» բառերը: Դրանք ես շատ խորը իմաստով եմ ընկալում: Ազատ մարդն այն մարդն է, որ կարող է իրականացնել իր էությունը: Այսինքն՝ մարդն ունի բնական նյութական պահանջներ և, լինելով մարդ, տարբերվելով այլ կենսաբանական էակներից, ունի նաև հոգևոր-մշակութային պահանջներ: Եվ ազատ մարդն այն մարդն է, որ կարողանում է բավարարել միաժամանակ և՛ իր նյութական նորմալ պահանջները, և՛ ինքն իրեն իրացնել իր հոգևոր, մշակութային պահանջների մեջ: Եվ եթե մարդը կարողանում է այս երկուսը անել, նա արդեն ազատ է: Հատկապես, եթե ինքն

իրեն իրացնում է որպես հոգևոր և մշակութային էակ, նա արդեն դառնում է ստեղծագործ: Եվ ստեղծագործ դառնալով՝ նա մոտենում է Արարչին, որովհետև Արարիչն է բացարձակ ստեղծագործը:

Ես նաև ուզում եմ փարատել այն թյուր կարծիքը, թե որոշակի հակասություն գոյություն ունի անհատի ազատության և ազգի ազատության միջև: Ես ինքս դեմ եմ անհատապաշտության, բայց դա չի նշանակում, որ մարդ անհատի գոյության արժեքը չեմ գնահատում: Ես գտնում եմ, որ մարդ անհատը արժևորվում է ընդհանրության մեջ՝ հանրության մեջ, հասարակության մեջ, ազգի մեջ: Եվ, ընդհակառակը՝ չկա ազգի համար ազատություն, ազգի ազատագրում, եթե ազգի ներսում այդ անհատը կամ այդ պետության քաղաքացին լիարժեքորեն ազատության և ստեղծագործելու պայմաններում չի գտնվում: Այս երկուսը ներդաշնակ են: Ես չեմ կարողանում այդ երկուսը՝ անհատը և ազգը, իրարից անջատ ընկալել:

Ուստի մեր նպատակը պետք է լինի ստեղծել բոլոր այն պայմանները, որոնք կերաշխավորեն ազատ և ստեղծագործ հայ մարդու և հայ ազգի ներդաշնակ գոյությունը, զարգացումը և հարատևումը:

## Նախախորհրդարանի հայտարարությունը

2013 թ. նոյեմբերի 5-ին Երևանի Մաշտոցի պողոտայում տեղի ունեցած դեպքերը վկայում են այն մասին, որ ժողովրդի մեջ հասունանում է ամեն կերպ, այդ թվում՝ ուժային միջոցներով, իր իշխանությունը վերականգնելու բնական և իրավաչափ ձգտումը:

Նոյեմբերի 5-ի պոռթկումը, որը դրսևորվեց հայրենասեր ու արժանապատիվ հայորդի Շանթ Յարությունյանի ձեռնարկած ցուցադրական ընդվզմամբ, ազատություն տենչացող մեր ժողովրդի հոգու ճիչն էր: Եվ այդ ճիչը ոչ միայն չմնաց առանց արձագանքի, այլև արագացնում է փոփոխությունների գործընթացը և հստակեցնում դրանց հասնելու ռազմավարական ու մարտավարական մոտեցումները:

Պետական կառավարման ապագային համակարգը՝ ի դեմս նրա կորիզը կազմող քրեաօլիգարխիկ վարչակազմի, գիտակցում է իր կործանման վերահաս վտանգը: Վարչախումբը փորձում է ամեն գնով, այդ թվում՝ նոյեմբերի 5-ին տեղի ունեցածի սցենարով ընդվզումներն ուղղորդելու, գործակալների, անգամ՝ ոստիկանության ծայտյալ ծառայողների, ձեռքով բախումներ հրահրելու, հանցագործություններ կատարելու, ինչպես նաև ակտիվ քաղաքացիներին ազատությունից զրկելու և ժողովրդին ահաբեկելու միջոցով չեզոքացնել իր համար խիստ անցանկալի այս հեռանկարը:

Այդ նպատակին հասնելու համար վարչախումբն արտաքին ճակատում ընտրել է պետության ինքնիշխանության մնացորդները օտարին հանձնելու, իսկ ներքին ճակատում՝ օտարի աջակցությամբ ժողովրդին իսպառ կեղեքելու և նրա դիմադրողունակությունը զրոյացնելու ճանապարհները:

Այս համատեքստում բնականոն կերպով տեղի են ունենում երկու հակադիր գործընթացներ. ժողովրդի առողջ ուժերի ակտիվացում ու համախմբում՝ երկիրը կործանման ուղուց զարգացման ուղու վրա դնելու և վարչախմբի ու նրանից սևվող ուժերի համախմբում՝ երկրի կառավարման ու թալանի հնարավորությունը պահպանելու համար: Հաշվի առնելով, որ պետական լծակներին տիրապետող հանցավոր վարչախումբը կազմակերպված ուժ է, մեր ժողովուրդը ևս պետք է կազմակերպվի, որպեսզի կարողանա հաղթահարել նրա հավանական դիմադրությունը:

Մինչ այդ, Նախախորհրդարանը քրեաօլիգարխիկ վարչախմբին մեկ անգամ ևս հիշեցնում է ժողովրդի արդար դատաստանի անխուսափելիության մասին և պահանջում է անհապաղ ազատ արձակել իր իսկ կազմակերպած սադրանքի պատճառով օրինախախտի կարգավիճակում հայտնված Շանթ Յարությունյանին ու մնացած բոլոր քաղբանտարկյալներին, ինչպես նաև պատասխանատվության ենթարկել այդ սադրանքը կազմակերպած և իրականացրած պաշտոնատար անձանց:

Նախախորհրդարանը կոչ է անում մեր ժողովրդին, առաջին հերթին՝ նրա ակտիվ մասին, ատելի համակարգից ժամ առաջ ազատվելու զգացական մղումների հետ ներդաշնակ կերպով համադրել գիտակցական ու կազմակերպված պայքարի գործելակերպը և պատրաստ լինել իր կամքը պարտադրելու վարչախմբին:

---

**Խնդրում ենք Շարժման և թերթի վերաբերյալ Ձեր հարցերը, առաջարկություններն ու դիտողություններն ուղարկել [azatagrumb2@gmail.com](mailto:azatagrumb2@gmail.com) հասցեով: Դրանցից առավել ուշագրավները, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեր պատասխանները և մեկնաբանությունները կգետնվեն թերթի հաջորդ համարում:**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ԱՐԳԱԽԸ ՆԵՐԱՌՅԱԼ)  
ՆՈՐԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՂԹԱՅԱՐՄԱՆ ԵՎ  
ՆՈՐ ՈՐԱԿԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՅՆՅԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ  
Ծ Ր Ա Գ Ի Ր  
(ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՐԱՆ)**

- Քայլ 1. Շարժման կառուցվածքային կայացում
- Քայլ 2. Չուզահեռաբար գործող կառավարման մարմինների ձևավորում և գործունեություն
- Քայլ 3. Չուզահեռաբար գործող կառավարման մարմինների լեգիտիմացում
- Քայլ 4. Գործող վարչախմբի անցնում հեռացում և անցումային կառավարում
- Քայլ 5. Նոր որակի պետության ձևավորման գործընթացի ծավալում

**Նպատակը՝**

Համահայկական շարժման ծավալմամբ Հայաստանի Հանրապետությունում (Արցախը ներառյալ) Նորգաղութային կեղեքման գործիքի վերածված պետական կառավարման համակարգին զուգահեռաբար գործող կառավարման մարմիններ ձևավորելու և լեգիտիմացնելու միջոցով վարչախմբի անցնում հեռացում և նոր որակի պետության ձևավորում:

**Քայլ 1. Շարժման կառուցվածքային կայացում**

Հայաստանի Հանրապետության (Արցախը ներառյալ) ամբողջ տարածքում և արտերկրի գաղթօջախներում Համահայկական շարժման տեղական մարմինների ցանցի (այսուհետև՝ Շարժում) ձևավորում:

**Քայլ 2. Չուզահեռաբար գործող կառավարման մարմինների ձևավորում և գործունեություն**

2.1. Անցումային ժողովրդավարության սկզբունքներով զուգահեռաբար գործող հետևյալ կառավարման մարմինների ձևավորում.

- Արդարության ատյան (անցումային արդարադատության սկզբունքների հաշվառմամբ),
- Հիմնադիր խորհրդարանի ընտրական հանձնաժողով,
- Հիմնադիր խորհրդարան,
- Անցումային կառավարություն:

2.2. Հիմնադիր խորհրդարանի գումարում<sup>1</sup> և զուգահեռաբար գործելու ձևաչափով նրա գործունեության իրականացում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում (Արցախը ներառյալ) նոր որակի պետության ձևավորման ու զարգացման ռազմավարական հայեցակարգի ընդունում:

2.3. Անհրաժեշտ պահին Անցումային կառավարության ձևավորում և զուգահեռաբար գործելու ձևաչափով նրա գործունեության իրականացում:

**Քայլ 3. Չուզահեռաբար գործող կառավարման մարմինների լեգիտիմացում**

Բաց հանրաքվեի տարբերակով Հիմնադիր խորհրդարանի լիգիտիմացման նպատակով և պետական կառավարումից վարչախմբի հեռացման հայտ ներկայացնելու համար բավարար քանակով քաղաքացիների<sup>2</sup> հետ նոր որակի պետության ձևավորման պայմանագրերի կնքում:

**Քայլ 4. Գործող վարչախմբի անցնում հեռացում և անցումային կառավարում**

4.1. Շարժման վերածում անհաղթահարելի ուժի՝ նրա կազմակերպվածության, կայունության, ինքնաբավության, նպատակասլացության և այլ հատկանիշների շնորհիվ:

4.2. Ըստ ներքոհիշյալ սցենարների հետևյալ գործողությունների իրականացում.

Սցենար 1. Վարչախումբը հեռանում է մինչև բավարար քանակով քաղաքացիների հետ պայմանագրերի կնքումը.

- Պայմանագրերի կնքման գործընթացի շարունակում՝ լիարժեք լեգիտիմության հասնելու նպատակով,

1 Հիմնադիր խորհրդարանը գումարման պահից ստանձնում է Շարժման կառավարումը:  
2 Պետական կառավարումից վարչախմբի հեռացման հայտ ներկայացնելու համար բավարար է համարվում պաշտոնական տվյալներով ամենաշատ մասնակցություն արձանագրած համապետական ընտրությունների մասնակիցների թվի կեսից ավելի (50%+1) քանակով քաղաքացիների հետ պայմանագրերի կնքումը: Ըստ պաշտոնական տվյալների, մասնակիցների ամենամեծ թիվն արձանագրվել է 2008 թ. փետրվարի 19-ի Նախագահական ընտրություններին (1.671.027 մասնակից), որի 50%+1 - ը կազմում է 835.514:

- Պայմանագրի դրույթներին համապատասխան Անցումային կառավարման փուլի հայտարարում,
  - Նոր որակի պետության կառուցման գործընթացի նախապատրաստում:
- Սցենար 2. Կարգախումբը շարունակում է պետական կառավարումը բավարար քանակով քաղաքացիների հետ պայմանագրերի կնքումից հետո.
- Լիարժեք լեգիտիմության իրավունքի հաշվառմամբ գործող վարչախմբին պետական կառավարումից հրաժարվելու հայտի ներկայացում և դրա իրականացման ապահովում ճարժման անհաղթահարելի ուժի գործադրման միջոցով,
  - Գործող վարչախմբի հեռացումից հետո Պայմանագրի դրույթներին համապատասխան Անցումային կառավարման փուլի հայտարարում,
  - Նոր որակի պետության կառուցման գործընթացի նախապատրաստում:

Քայլ 5. Նոր որակի պետության ձևավորման գործընթացի ծավալում (Անցումային ժողովրդավարությունից դեպի կայուն ժողովրդավարության հաստատում)

Անցումային կառավարման փուլի ավարտին ժողովրդավարական ընտրությունների անցկացման միջոցով օրենսդիր, գործադիր, դատական և պետական կառավարման այլ անհրաժեշտ մարմինների ձևավորում:

## **ՀԻՄՆԱԴԻՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

«Նոր որակի հայկական պետության ձևավորման համահայկական շարժման»  
ծրագրի հավելված  
(ընդունվել է Նախախորհրդարանի 2013 թ. հունիսի 13-ի որոշմամբ)

Սույն Ծրագրային հիմնադրույթների և կանոնակարգի (այսուհետև՝ Կանոնակարգ) նպատակն է՝ ապահովել Հիմնադիր խորհրդարանի Ընտրական հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) կանոնակարգված արդյունավետ աշխատանքը:

### **Հանձնաժողովի նպատակը և խնդիրները**

1.1. Հանձնաժողովի նպատակն է՝ ապահովել Հայաստանում Նոր որակի պետության Հիմնադիր խորհրդարանի ընտրությունը:

1.2. Կանոնակարգի 1.1 կետում նշված նպատակին հասնելու համար, Հանձնաժողովը լուծում է հետևյալ խնդիրները՝

1.2.1. Նախախորհրդարանի Ծրագրային հիմնադրույթների և կանոնակարգի (այսուհետև՝ Նախախորհրդարանի կանոնակարգ) 1.2.6 կետի\* համաձայն հաստատված կարգով Հիմնադիր խորհրդարանի ընտրությունների մասնակիցների

րի ընտրագատում, գրանցում և նրանց ցուցակների հրապարակում,

1.2.2. Նախախորհրդարանի կանոնակարգի 1.2.6 կետի\* համաձայն հաստատված չափանիշներին համապատասխան Հիմնադիր խորհրդարանի պատգամավորության թեկնածուների ընտրագատում և գրանցում, ինչպես նաև պատգամավորության թեկնածուին գրանցելու կամ չգրանցելու վերաբերյալ իր որոշումների հիմնավորումների ներկայացում ու հրապարակում,

1.2.3. Նախախորհրդարանի կանոնակարգի 1.2.6 կետի\* համաձայն հաստատված կարգով Հիմնադիր խորհրդարանի ընտրության նպատակով քվեարկության կազմակերպում, ձայների հաշվում և արդյունքների հրապարակում,

1.2.4. իր գործունեության պարբերական հանրային իրազեկում:

### **2. Հանձնաժողովի կազմը և կառուցվածքը**

2.1. Հանձնաժողովը կազմված է Նախախորհրդարանի Կանոնակարգի 1.1 և 1.2 կետերում նշված նպատակն ու խնդիրները, ինչպես նաև Նախախորհրդարանի հաստատած Ռազմավարական հայեցակարգի նախագիծն ընդունող, Հանձնաժողովի աշխատանքի մեկնարկի պահից

\*Նախախորհրդարանի 2012 թ. նոյեմբերի 20-ի որոշմամբ հաստատված «Նախախորհրդարանի Ծրագրային հիմնադրույթների և կանոնակարգի» 1.2.6-րդ կետով սահմանված կարգի համաձայն՝ Հիմնադիր խորհրդարանի պատգամավորության թեկնածուների ընտրագատման չափանիշները, ինչպես նաև ընտրության կարգը մշակում և հաստատում է Նախախորհրդարանը:

ՀՀ-ում (Ներառյալ Արցախը) մշտապես բնակվող և հասարակական հեղինակություն ունեցող 9 (ինը) անդամներից:

Հանձնաժողովի անդամը չի կարող ընտրվել Հիմնադիր խորհրդարանի պատգամավոր:

2.2. Հանձնաժողովի անդամի թեկնածությունն առաջադրելու իրավունքը վերապահվում է Նախախորհրդարանի և Նախախորհրդարանի քարտուղարության (այսուհետ՝ Քարտուղարություն) անդամներին: Հանձնաժողովի անդամ ընտրվելու պարագայում Քարտուղարության անդամը դուրս է գալիս դրա կազմից:

2.3. Հանձնաժողովի կազմի հաստատումը, ինչպես նաև հետագայում դրա թափուր տեղի համալրումը կատարվում է Նախախորհրդարանի կանոնակարգի 3.3 կետով սահմանված կարգով ընդունված Նախախորհրդարանի որոշմամբ (եթե որոշման օգտին բաց կարգով քվեարկել է Նախախորհրդարանի առնվազն 22 (քսաներկու) անդամ (ընդհանուր քանակի 67%-ը):

2.4. Հանձնաժողովի աշխատանքները (Ներառյալ՝ նիստերի անցկացումը) համակարգում է Հանձնաժողովի նախագահը (այսուհետ՝ Նախագահ), իսկ վեջինիս բացակայության ժամանակ՝ նրա տեղակալը (այսուհետ՝ Տեղակալ), որոնց Կանոնակարգի 2.2 և 2.3 կետերով սահմանված կարգով ընտրում է Նախախորհրդարանը:

### **3. Հանձնաժողովի նիստերի անցկացման և որոշումների ընդունման կարգը**

3.1. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս, քան տասը օրը 1 (մեկ) անգամ: Նիստը համարվում է կայացած, եթե բացման պահին ներկա է Հանձնաժողովի առնվազն 5 (հինգ) (ընդհանուր քանակի 50%+1-ը) անդամ:

3.2. Յուրաքանչյուր հաջորդ նիստի օրը, ժամը և օրակարգը, խորհրդակցելով Հանձնաժողովի անդամների հետ, հայտարարում է Նախագահը, իսկ նրա բացակայության ժամանակ՝ Տեղակալը:

3.3. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ դրա առնվազն 5 (հինգ) (ընդհանուր քանակի 50%+1-ը) անդամի ձայնով:

3.4. Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում կարող է խորհրդակցական ձայնի իրավունքով ներգրավել նաև փորձագետներ և խորհրդականներ:

3.5. Մեկ նիստի ընթացքում, բացի գեկուցումից (որի տևողությունը չի կարող գերազանցել 20 (քսան) րոպեն), օրակարգի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ կարծիք արտահայտելու համար տրվում է առավելագույնը 3 (երեք) ելույթի հնարավորություն (յուրաքանչյուր ելույթի տևողությունը չի կարող գերազանցել 3 (երեք) րոպեն):

3.6. Նիստն ավարտվում է օրակարգի կամ

դրա համար հատկացված ժամանակի սպառման դեպքում, եթե Հանձնաժողովն այլ որոշում չի կայացնում:

3.7. Հանձնաժողովի անդամը հարգելի պատճառով կարող է նիստին և քվեարկություններին մասնակցել հեռավար կապի միջոցով:

3.8. Հանձնաժողովի անդամի՝ 5 (հինգ) նիստից անհարգելի բացակայության դեպքում Նախախորհրդարանը որոշում է կայացնում նրա հետագա անդամության վերաբերյալ:

3.9. Հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումը (Ներառյալ՝ նիստերի արձանագրությունների կազմումը և Հանձնաժողովի որոշումների հրապարակումը) իրականացնում է Քարտուղարությունը: Քարտուղարությունը Հանձնաժողովի որոշումները հրապարակում է ոչ ուշ, քան դրանք ընդունելու օրվանից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

### **4. Որոշումների նախագծերի մշակման և ներկայացման կարգը**

4.1. Հանձնաժողովի որոշումների նախագծերը մշակում են Հանձնաժողովի անդամները, հրավիրված փորձագետներն ու խորհրդականները, ինչպես նաև Քարտուղարությունը՝ Հանձնաժողովի որոշմամբ:

### **5. Հանձնաժողովի վերակազմակերպումը**

5.1. Հանձնաժողովը Հիմնադիր խորհրդարանի գումարման պահից նույն կազմով վերակազմակերպվում է Նախախորհրդարանի կանոնակարգի 1.2.5 կետով նախատեսված՝ ՀՀ քաղաքացիների հետ պայմանագրերի կնքման գործընթացը համակարգող կենտրոնական շտաբի (այսուհետ՝ Կենտրոնական շտաբ):

5.2. Նախագահի ու Տեղակալի պաշտոնները համապատասխանաբար վերանվանվում են՝ Կենտրոնական շտաբի պետ և Կենտրոնական շտաբի պետի տեղակալ:

5.3. Կենտրոնական շտաբը ձևավորում է տեղական շտաբներ և հաստատում է դրանց գործունեության կանոնակարգերը, գործում է որպես դրանց վերադաս և համակարգող մարմին:

5.4. Մինչ Հիմնադիր խորհրդարանի որոշմամբ Կենտրոնական շտաբի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթի ընդունումը, նրա գործունեության կազմակերպումը և որոշումների կայացումը կատարվում է Կանոնակարգի 3.1-3.10 և 4.1 կետերով սահմանված կարգով:

5.5. Կենտրոնական շտաբի անդամի թափուր տեղը համալրվում է Հիմնադիր խորհրդարանի որոշմամբ՝ նրա գործունեությունը կանոնակարգող փաստաթղթով սահմանված կարգով:

## Չ Ա Փ Ա Ն Ի Շ Ն Ե Ր

### 65 անդամ ունեցող Հիմնադիր խորհրդարանի պատգամավորության թեկնածուների ընտրագատման

1. Գործունակություն:
2. Հայերենի իմացություն:
3. «Հայաստանի Հանրապետությունում (Արցախը ներառյալ) նորագոյության իրավիճակի հաղթահարման և նոր որակի հայկական պետության ձևավորման համահայկական շարժման» ծրագրի և Նախախորհրդարանի մշակած ու ընդունած՝ «Նոր որակի հայկական պետության ձևավորման և զարգացման ռազմավարական հայեցակարգ»-ի նախագծի ընդհանուր դրույթների հետ համաձայնություն:
4. 27 տարին լրացած լինելու հանգամանք (21-27 տարեկան անձանց համար սահմանվում է մասնաբաժին՝ մինչև 5 տեղ):
5. Բարձրագույն կրթություն (բարձրագույն կրթություն չունեցող անձանց համար սահմանվում է մասնաբաժին՝ մինչև 5 տեղ):
6. ՀՀ քաղաքացի, ինչպես նաև օտարերկրյա պետության քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող ազգությամբ հայ լինելու հանգամանք (ՀՀ քաղաքացիություն չունեցող ազգությամբ հայերի համար սահմանվում է մասնաբաժին՝ մինչև 11 տեղ):
7. Հիմնադիր խորհրդարանի աշխատանքի մեկնարկի պահից ՀՀ (ներառյալ Արցախը) տարածքում մշտական բնակության և ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու համար սահմանված կարգով դիմում ներկայացրած լինելու հանգամանքներ:
8. Հիմնադիր խորհրդարանի Ընտրական հանձնաժողովի և Արդարության ատյանի անդամ չլինելու հանգամանք:
9. Որպես պատգամավորության թեկնածու գրանցվելու պահից պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոն չզբաղեցնելու հանգամանք:
10. Դիտավորությամբ հանցագործություն կատարած չլինելու հանգամանք\*:
11. Նախկին ԽՍՀՄ կամ օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների կամ իրավապահ մարմինների աշխատող կամ նախկին ԽՍՀՄ, ՀՀ, ԼՂՀ կամ օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների կամ իրավապահ մարմինների արտահաստիքային գործակալ չլինելու հանգամանք:
12. ՀՀ-ում կամ ԼՂՀ-ում ստորև նշված կամ դրանց հավասարեցվող պաշտոններից որևէ մե-

- կը զբաղեցրած չլինելու հանգամանք՝
- Նախագահ,
  - Ազգային ժողովի նախագահ կամ Ազգային ժողովի նախագահի տեղակալ,
  - Վարչապետ կամ փոխվարչապետ,
  - Ազգային անվտանգության խորհրդի անդամ,
  - Նախագահի կամ Կառավարության աշխատակազմի ղեկավար կամ տեղակալ,
  - մարզպետ կամ մարզպետի տեղակալ,
  - Երևանի քաղաքապետ կամ Երևանի քաղաքապետի տեղակալ, Երևանի վարչական շրջանի ղեկավար, այլ համայնքի ղեկավար\*,
  - անվտանգության, ոստիկանության, ֆիսկալ, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող և քրեակատարողական մարմինների աշխատող\*,
  - դատավոր, դատախազ, քննիչ\*,
  - Կենտրոնական բանկի նախագահ, տեղակալ կամ խորհրդի անդամ,
  - Վերահսկիչ պալատի անդամ,
  - Նախագահի կամ Վարչապետի վերահսկողական ծառայության աշխատող,
  - Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցիչ,
  - պետության ֆինանսավորմամբ կամ հովանավորությամբ գործող Ծրագրի իրականացման գրասենյակի ղեկավար կամ տեղակալ\*,
  - Ընտրական հանձնաժողովի անդամ (վարչախումբը ներկայացնող կուսակցության կողմից),
  - վարչախումբը ներկայացնող կուսակցության ղեկավար մարմնի անդամ\*:

#### Ծանոթագրություններ

4-6-րդ կետերով նախատեսված մասնաբաժինները սահմանվում են դրանց գումարի (21) և Հիմնադիր խորհրդարանի տեղերի ընդհանուր քանակի (65) միջև 1/3 հարաբերակցությունը չզերազանցելու տրամաբանությամբ:

12-րդ կետում աստղանիշներով նշված չափանիշներին համապատասխանող անձի թեկնածությունը գրանցելու, ինչպես նաև ըստ սույն փաստաթղթով չնախատեսված չափանիշի անձի թեկնածությունը չգրանցելու հարցերի որոշման իրավասությունը վերապահվում է Հիմնադիր խորհրդարանի Ընտրական հանձնաժողովին: Ընտրական հանձնաժողովը պարտավոր է իր այդպիսի որոշումները հիմնավորել և հրապարակել: